



ՀԱՆՈՒՆ ԿԱՅՈՒՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ



ԵՐԿՐԻ ՀՐՈՎԱՐՏԱԿԸ՝ ԳԼՈԲԱԼ ԷԹԻԿԱՅԻ
ՈՒՂԵՑՈՒՅՑ
ՀԱՆՈՒՆ ԿԱՅՈՒՆ ԱՊԱԳԱՅԻ

ХАРТИЯ ЗЕМЛИ - ОРИЕНТИР В ГЛОБАЛЬНОЙ
ЭТИКЕ ДЛЯ УСТОЙЧИВОГО БУДУЩЕГО

ԵՐԵՎԱՆ 2009 ԵՐԵՎԱՆ

ՀՏԴ 32 (479.25)

ԳՄԴ 66 (2Հ)

Կ-199

Կ 199 «Երկրի Հրովարտակը՝ գլոբալ էթիկայի ուղեցույց հանուն կայուն ապագայի» Եր.,
Լուսակն, 2009

Хартия Земли – ориентир в глобальной этике для устойчивого будущего

«Հանուն կայուն մարդկային զարգացման» ասոցիացիա/ UNEPCom

Ассоциация «За устойчивое человеческое развитие»/UNEPCom

Հրատարակությունը պատրաստվել է «Երկրի Հրովարտակ» միջազգային խորհրդի
աջակցությամբ:

Издание подготовлено при финансовой поддержке Международного Совета «Хартия
Земли»

Խմբագիր՝ աշխ. գիտ.դոկոր, պրոֆ. Կարինե Դանիելյան

Редактор – докт.геогр.наук, проф. Карине Даниелян

0801000000

Կ 2006

ԳՄԴ 66 (2Հ)

ISBN 99930-880-9-9

ի «Հանուն կայուն մարդկային զարգացման» ասոցիացիա/UNEPCom 2009

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
Երկրի Հրովարտակը որպես կայուն զարգացման տեսության և պրակտիկայի բարոյագիտական /էթիկական/ կոդեքս (նախաբանի փոխարեն)	4
«Երկրի Հրովարտակե Նախաձեռնության Միձագգային խորհուրդ	7
Երկրի Հրովարտակը / պաշտոնական տեքստ/	22
Երկրի Հրովարտակը երեխաների համար	30
Երկրի հրովարտակը դպրոցում	32
Բաց նամակ իմ հասակակիցներին /195 –րդ դպրոցի աշակերտների դիմումը/	33
Գեոի հեքիաթը	35
Թեղուտ (ոտանավոր)	37
Хартия Земли – этический кодекс теории и практики устойчивого развития (вместо предисловия)	39
Международный Совет Инициативы «Хартия Земли» (пособие)	41
Хартия Земли (официальный текст)	53
Хартия Земли для детей	58
Открытое письмо моим сверстникам (Обращение учеников школы N 195)	60
Сказка о речке	61

**ԵՐԿՐԻ (ԵՐԿՐԱԳՆԴԻ) ՀՐՈՎԱՐՏԱԿԸ ՈՐՊԵՍ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԲԱՐՈՅԱԳԻՏԱԿԱՆ /ԷԹԻԿԱԿԱՆ/
ԿՈՂԵՔՍ
(նախաբանի փոխարեն)**

Մենք նորից ու նորից ենք անդրադառնում Երկրի Հրովարտակին, տպագրում նրա տեքստն և Հրովարտակի անցած ճանապարհի պատմությունն ու տրամաբանությունը: Հայաստանում սա Երկրի Հրովարտակին նվիրված արդեն հինգերորդ հրատարակությունն է: Բոլոր նախկին տպաքանակներն արդեն վաղուց ամբողջությամբ սպառվել են, սակայն մեծ պահանջարկն ու հետաքրքրությունը չեն նվազում, ուստի և մենք որոշեցինք “Երկրի Հրովարտակ” Միջազգային կազմակերպության կողմից ներկայացրած նյութերի հետ մեկտեղ այս գրքույկում ներառել նաև բուն Հրովարտակի տեքստը: Բացի այդ, գրքույկում ներառել ենք նաև Ասոցիացիայի կողմից նախապատրաստած, երեխաների համար հարմարեցված, նախկինում երկու անգամ մի քանի լեզուներով տպագրված “Երկրի Հրովարտակը երեխաների համար”-ի տեքստը և դարձյալ մեզ մոտ մնացել են այս տարբերակի եզակի նմուշներ միայն [1, 2]:

Արդյո՞ք, այդչափ կարևոր է Հրովարտակը և արժանի՞ է նմանօրինակ ուշադրության: Անխոս՝ այո: Բավական է ծանոթանալ նորությունների ամենօրյա ամփոփագրերին, որպեսզի, ինչպես դեռևս անցյալ դարի 30-ական թվականներին գրում էր Ն. Ռերիխը «խորհենք, թե ամեն ինչ կարգի՞ն է, արդյոք» [3]: Մի՞թե ավելի ու ավելի հաճախակի դարձած կործանարար երկրաշարժերն ու ցունամիները, տորնադոներն ու փոթորիկները, համատարած և մշտական դարձած եղանակային անոմալիաները մեզ ոչինչ չեն ասում: Միևնույն մայրցամաքներում, համեմատաբար ոչ մեծ հեռավորությունների վրա, մի տարածաշրջանում «մեծ երաշտ» է, անտառային հրդեհներ, մյուսում՝ անսովոր ինտենսիվության տեղատարափ անձրևներ, սելաֆներ ու ջրհեղեղներ:

Եվ օրինաչափ է, այլ ոչ պատահական, որ 2009թ. հունիսի 24-26-ին Նյու-Յորքում, ՄԱԿ-ի կենտրոնակայանում տեղի ունեցած ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի «Ֆինանսա - տնտեսական ճգնաժամը և զարգացման վրա նրա ազդեցությունը» թեմայով կոնֆերանսը հավասարապես անդրադառնում էր նաև կլիմայի փոփոխության հիմնահարցերին: Երկրների ղեկավարները, կառավարությունների ներկայացուցիչները իրենց ծայրագույն տազնապն էին արտահայտում ահագնացող կլիմայական փոփոխությունների կապակցությամբ, որը հիմնավորապես խարխլում է գյուղատնտեսության ու տուրիզմի հիմքերը, սպառնալով հենց մարդկության բուն գոյությանը: Այդ անհանգստությունն արտահայտված է նաև կոնֆերանսի եզրափակիչ փաստաթղթում, որը Գլխավոր ասամբլեայի կողմից հաստատվել է 63-րդ նստաշրջանի բանաձևի տեսքով [4, 5]:

Ավելին, ՄԱԿ-ի բոլոր կառույցների կողմից կոնֆերանսում տարածած հայտարարության մեջ հաստատվում է, որ ներկայիս գլոբալ ճգնաժամը կարելի է հաղթահարել միայն «կանաչ էկոնոմիկայի» օգնությամբ, ուղղորդվելով կայուն զարգացման սկզբունքներով, որն ապահովում է կայուն արտադրություն և սպառում, զարգացման տնտեսական, բնապահպանական և սոցիալական առաջնայնությունների միջև արդյունավետ հավասարակշռում [6]:

Ցավոք, մարդկությունն ընդամենը հայտարարել է կայուն զարգացման (ԿԶ) անցման մասին, սակայն, պրակտիկայում, «ինչպես միշտ, բիզնեսի» իներցիան շատ մեծ է: Ինչպես նախկինում, այժմ դարձյալ դեպի ԿԶ վերակողմնորոշման քարշիչ ուժը մնում են հասարակական կազմակերպություններն ու գիտական հանրությունը, այն դեպքում, երբ

որոշում կայացնող անձիք ծայրահեղ զգույշ և դանդաղկոտ են, իսկ համաշխարհային ֆինանսական ինստիտուտները, փաստորեն, չեն կատարում Ռիոյի Վեհաժողովում իրենց կողմից վերցրած պարտավորությունները: Այնուամենայնիվ, փորձագիտական հանրությունը համոզված է՝ կայուն աշխարհին անհրաժեշտ է և հնարավոր:

Երկիր մոլորակը, ասես, ներկա քաղաքակրթությանը զգուշացնում, կոչ է անում. «Մթափվի՞ր, մարդ արարած, զսպի՞ր քո գոռոզությունը ու անեզր ազահությունը, շրջվի՞ր դեպի ակունքները, վերհիշի՞ր, որ դու ընդամենը Բնության մի մասնիկ ես, պահպանի՞ր նրան, որովհետև այն ամենն, ինչ կատարվում է նրա հետ, անպայման կատարվելու է նաև քեզ հետ»:

Այս պարզ իմաստությունն ակնհայտ է աշխարհի շատ տեղաբնիկ ժողովրդների համար, դրանով է ներծծված ամերիկյան հնդկացիների ղեկավարի՝ «Միթթի առաջնորդի ուղերձը», ովքեր ստիպված էին հեռանալ ռեզերվացիա.

«Ի՞նչ է մարդն առանց կենդանիների: Եթե բոլոր կենդանիները վերանային, մարդը կմեռներ անձկությունից ու միայնությունից: Քանի որ այն ամենն, ինչ կատարվում է կենդանիների հետ, շատ շուտով կատարվում է նաև մարդու հետ: Ամեն ինչ ամեն ինչի հետ փոխկապակցված է»:

Եվ հնդկացիները ոչ մի կերպ չէին կարողանում հասկանալ «զուտ սպանելու ցանկության ու հաճույքի համար բիզոնների հոտեր ոչնչացնելու, նրանց սլացող գնացքից սպանելու ունակ սպիտակ մարդու առաքելությունը» [7]:

Ինքն իրեն Տիեզերքի տիրակալ երևակայող սպիտակ մարդն, իրոք, մոռացել է այս ճշմարտությունը: Իսկապես եկել է «քարերը հավաքելու ժամանակը»: Դեմքով շրջվել դեպի Բնությունը և զիտակցել, որ Երկրի ողջ շքեղագույն գեղեցկությունն ու շոայությունը, նրա հարստագույն կենդանի հանրությունը պահպանելը մարդու կարևորագույն առաքելությունն է:

Մի քանի տարի առաջ կաթոլիկ Ջատկի նախօրեին Վատիկանը հայտարարեց մահացու մեղքերի ցուցակի թարմացման մասին, որը չէր թարմացվել 1500 տարի: Ցուցակում, որպես մահացու մեղք, ներմուծվեց նաև «շրջակա միջավայրի աղտոտումը» [8]: Շրջակա միջավայրի դեգրադացման խնդիրներին և կլիմայի փոփոխությանը մեծ ուշադրություն է դարձնում նաև Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը: Հայ առաքելական եկեղեցու ուսումնական հաստատություններում ուսումնասիրվում է «Բնապահպանություն և աստվածաբանություն» դասընթացը [9]:

ՄԱԿ-ի վերընշված կոնֆերանսի իր ներածական խոսքում ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի նախագահ հայր Միգել դե'Էսկոտո Բրոկմանն ընդգծեց.

«Երկիր կենդանի մոլորակը մեր միասնական, ընդհանուր տունն է, որը չի կարելի ոչ գնել և ոչ էլ վաճառել...: Մենք սիրո արդյունք ենք, Երկիրը սիրով մեզ է տալիս իր ռեսուրսները: Սակայն մենք մոռացել ենք, որ հանդիսանում ենք ոչ միայն Երկրի վայելողները, այլ նաև պահապանները. մենք շատ վատ պահապաններ դուրս եկանք: Մենք պարտավոր ենք ըմբռնել և փոխվել, մենք պարտավոր ենք Երկրին հղել պատասխան սեր» [4]:

Երկրի Հրովարտակում ողջ վերընկարագրվածը հիանալիորեն արտացոլված է՝ և՛ անհանգստությունն ու տագնապը ներկա իրավիճակի համար, և՛ մարդկության պարտքը ողջ կենդանի հանրության, Երկիր մոլորակի, ի վերջո, հենց Տիրոջ հանդեպ: Հրովարտակը կոչ է անում հիմնավորապես փոխել մեր աշխարհայացքը, մատնանշում է կայուն զարգացման ուղիները, անկեղծորեն հուսալով, որ «...մերը կլինի այն ժամանակը, որը կհիշվի իբրև կյանքի նկատմամբ հարգանքի վերականգման, կայունության հասնելու վճռականության, հանուն արդարության ու խաղաղության պայքարի խթանման և կյանքի ցնձալի հաղթանակի ժամանակաշրջան [1]»:

Երկրի Հրովարտակը, իրոք, համամարդկային փաստաթուղթ է, այն եզակի ճանապարհ է անցել՝ «վարից վեր», սկսած տեղական համայնքներում, ազգային և միջազգային գիտաժողովներում քննարկումներից, մինչև ՄԱԿ –ի կառույցների կողմից նախաձեռնած համաժողովներում քննարկումներն ու հավանության արժանանալը: Այս գործընթացում Հայաստանը նույնպես ակտիվ մասնակցություն է ունեցել, և մենք հպարտ ենք, որ Հրովարտակի այդ եզակի ուղու և՞ վկան, և՞ մասնակիցն ենք եղել և, որ ՀՀ-ից ներկայացված մեկնաբանությունները իրենց արտացոլումն են գտել փաստաթղթի վերջնական տարբերակում:

Վերջում ուզում եմ արտահայտել համոզմունքս, որ Հրովարտակը հաջողությամբ կիրականացնի իր առաքելությունը և կօգնի մարդկանց գիտակցել իրենց ճշմարիտ տեղը էկոսֆերայում, էապես կաջակցի ներկա քաղաքակրթության անցմանը դեպի հավասարակշռված, ներդաշնակ, կայուն զարգացում:

Օգտագործված գրականություն

1. Երկրի Հրովարտակ: Հոդվածների ժողովածու Կ.Դանիելյանի խմբագրությամբ: Երևան, 2000.
2. Կ.Դանիելյան և «Հանուն ԿՄԶ» ասոցիացիայի երիտասարդական սեկցիա. «Երկրի Հրովարտակը երեխաների համար», Երևան, 2002.
3. Материалы Конференции Генеральной ассамблеи ООН «Финансово-экономический кризис и его влияние на развитие», 24-26 июня 2009г. , штаб-квартира ООН в Нью-Йорке.
4. Резолюция, принятая Генеральной ассамблеей ООН. Шестьдесят третья сессия, пункт 48 повестки дня. A/Res/63/303, 2009.
5. Green Economy: A Transformation to Address Multiple Crises. An Interagency Statement of the United Nations System. UN, N-Y, 2009.
6. Послание вождя Сиетла. // Экологический бюллетень N 3, Ассоциация «За УЧРԷ, ЮНЕП, Ереван, 2003.
7. А. Гопко, О. Листопад, Т. Малькова. Журналистское расследование на экологическую тему. Информационный центр «Зеленое досье». Киев, 2008.
8. Բնապահպանություն և աստվածաբանություն. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոց, ԵՊՀ, Վաղարշապատ, 2007.

«Հանուն ԿՄԶ » ասոցիացիան/ UNEPCom-ը իր անկեղծ շնորհակալությունն է հայտնում «Երկրի Հրովարտակը» միջազգային կազմակերպության Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի հարցերով համակարգող տ-ն Մարինա Բախնովային բազմամյա արդյունավետ համագործակցության և մշտական, բարձրորակ մասնագիտական տեղեկատվական աջակցության համար:

Վարինե Դանիելյան, աշխ. գիտ. դոկտոր., ԵՊՀ պրոֆ. «Հանուն կայուն մարդկային զարգացման» ասոցիացիայի / UNEP ազգային կոմիտեի նախագահ, սույն հրատարակության խմբագիր:

Ն Ն Ն

ԵՐԿՐԻ(ԵՐԿՐԱԳՆԴԻ) ՀՐՈՎԱՐՏԱԿԻ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ (ձեռնարկ) *

Ի՞նչ է Երկրի (Երկրագնդի) Հրովարտակը

Երկրի Հրովարտակի նախաձեռնության առաքելությունն է՝ խթանել անցումը դեպի ապրելակերպի կայուն ուղիներ և համաշխարհային հանրություն, որը հարգում է ընդհանուր բարոյական սկզբունքները, որոնցից են՝ խնամք և հարգանք դեպի կենդանի արարածների համակեցությունը, էկոլոգիական միասնությունը, մարդկանց բազմակողմանի իրավունքները, հարգանք դեպի բազմազանություն, տնտեսական արդարություն, ժողովրդավարություն և խաղաղության մշակույթ:

Երկրի Հրովարտակի առաքելությունը

Երկրի Հրովարտակը՝ դա հիմնական էթիկական սկզբունքների հռչակագիր է՝ նվիրված 21-րդ դարում արդար, կայուն և խաղաղ հանրություն կառուցելուն: Երկրի Հրովարտակը կոչված է ներշնչելու մարդկանց միասնական մարդկային ընտանիքի, կենդանի հանրության և ապագա սերունդների բարեկեցության նկատմամբ համընդհանուր փոխշաղկապվածության ու պատասխանատվության նոր զգացմունք: Հրովարտակը միաժամանակ հանդիսանում է և՛ հույսի տեսակետ և՛ գործելու կոչ:

Երկրի Հրովարտակի նպատակն է՝ անցում դեպի կայուն ապրելաձև ու կայուն մարդկային զարգացում: Էկոլոգիական ամբողջությունը դրա հիմնական թեմաներից է: Մինևույն ժամանակ Հրովարտակը ընդունում է, որ շրջակա միջավայրի պահպանության անհրաժեշտությունը, աղքատության հաղթահարումը, արդար տնտեսական զարգացումը, մարդու իրավունքների հարգանքը, ժողովրդավարությունը ու խաղաղությունը փոխկապակցված են և անբաժանելի: Հրովարտակը նոր, համընդհանուր բարոյական հենք է տրամադրում դեպի կայուն ապագայի անցմանը:

Երկրի Հրովարտակը՝ տասնյակ տարիների ընթացքում համաշխարհային մակարդակով տարբեր մշակույթների միջև ընդհանուր նպատակների և արժեքների վերաբերյալ տեղի ունեցած երկխոսության արդյունք է: Երկրի Հրովարտակի ծրագիրը սկսվեց որպես ՄԱԿ-ի նախաձեռնություն, սակայն այն իր հետագա զարգացումն ստացավ և հասավ իր վերջնական տեսքին՝ գլոբալ քաղաքացիական նախաձեռնության շնորհիվ: Երկրի Հրովարտակը վերջնականորեն մշակվեց և ներկայացվեց որպես ժողովրդական Հրովարտակ 2000 թ-ին՝ “Երկրի Հրովարտակի հանձնաժողով” անկախ միջազգային կազմակերպության կողմից:

Երկրի Հրովարտակի մշակման գործընթացը հանդիսացավ ամենալայն մասնակցությամբ մի գործընթաց, որն երբևէ տեղի է ունեցել միջազգային հռչակագրերի մշակման ոլորտում: Այդ աննախադեպ գործընթացն է, որը քաղաքական նշանակություն է շնորհում Հրովարտակին, դարձնելով այն էթիկական ուղեցույց մարդկության կայուն զարգացման ասպարեզում: Փաստաթղթի նշանակությունը հետագայում հաստատվեց, երբ այն ընդունվեց 4800 կառույցների, այդ թվում բազմաթիվ երկրների կառավարությունների ու միջազգային կազմակերպությունների, կողմից:

* հատվածներ «Երկրի Հրովարտակե Նախաձեռնության Միձագային խորհուրդի ձեռնարկից /2008, օգոստոս, Կոստա-Ռիկա/

Հաշվի առնելով փաստաթղթի լայն ճանաչումը՝ քանակով հետզհետե ավելացող միջազգային իրավաբանները դիտարկում են այն որպես միջազգային ոչ պարտադիր իրավունքի փաստաթուղթ: Նմանատիպ ոչ պարտադիր իրավական փաստաթղթերը, ինչպես, օրինակ, Մարդու իրավունքի համընդհանուր հռչակագիրը, նախնական փուլում ընդունվում են որպես բարոյական միջազգային ոչ պարտադիր իրավունքի փաստափուղթ, սակայն հետագայում հիմք են դառնում միջազգային պարտադիր իրավական փաստաթղթի մշակման համար:

Այս ժամանակաշրջանում, երբ կարիք կա հիմնովին փոխել մեր մտածելակերպն ու ապրելակերպը, Երկրի Հրովարտակը խթանում է մեզ վերաքննել մեր արժեքները և ընտրել լավագույն ուղին: Ժամանակաշրջանում, երբ համաշխարհային մակարդակով գործընկերությունը առավելապես անհրաժեշտ է, Երկրի Հրովարտակը խրախուսում է մեզ գտնել համընդհանուր հիմք մեր բազմազանության մեջ և ընդունել նոր գլոբալ էթիկա, որն ընդունվում և տարածվում է ամբողջ աշխարհով մեկ: Այս ժամանակաշրջանում, երբ կարևորվում է կայուն զարգացման հիմքերով կրթությունը, Երկրի Հրովարտակը հանդիսանում է արժեքավոր կրթական մեխանիզմ:

Երկրի Հրովարտակի նախաձեռնության մասին

Երկրի Հրովարտակի նախաձեռնություն

“Երկրի Հրովարտակի նախաձեռնությունը” Երկրի Հրովարտակի սկզբունքները ու արժեքները տարածող և իրականացնող մարդկանց, կազմակերպությունների, կառույցների աննախադեպ բազմազան գլոբալ ցանցի հավաքական անվանումն է:

Նախաձեռնությունը իրենից ներկայացնում է քաղաքացիական հասարակության լայնածավալ ու կամավոր շարժում: Այդ շարժման մասնակիցներն են. միջազգային առաջավոր կառույցները, երկրների կառավարություններն ու հիմնարկները, համալսարանները, հասարակական կազմակերպությունները և համայնքները, քաղաքապետարանները, կրոնական խմբերը, դպրոցներն և գործարարների խմբերը, ինչպես նաև հազարավոր անհատներ:

Բազմաթիվ կազմակերպություններ պաշտոնապես ընդունել են Երկրի Հրովարտակը, կիրառում են այն կամ տարածում դրա արժեքները, բազմաթիվ այլ կազմակերպություններ կիրառում և աջակցում են Երկրի Հրովարտակի գաղափարների տարածմանը առանց դրա պաշտոնական ճանաչմանը:

“Երկրի Հրովարտակ” միջազգային կազմակերպությունը (ԵՀՄԿ)

“Երկրի Հրովարտակ” միջազգային կազմակերպությունը /ԵՀՄԿ/ կազմված է խորհրդից և քարտուղարությունից: Այս միջազգային հասարակական կազմակերպությունը ստեղծվել է Երկրի Հրովարտակի գաղափարի և առաքելության առաջխաղացմանը օժանդակելու համար: ԵՀՄԿ-ն գործում է Երկրի Հրովարտակի տարածման, ճանաչման, կիրառման և իրագործման, ինչպես նաև Երկրի Հրովարտակի նախաձեռնության զարգացմանը օժանդակելու ուղղությամբ: ԵՀՄԿ-ն ստեղծվել է 2006 թ.՝ Երկրի Հրովարտակի նախաձեռնության գործունեության վերակառուցման և ընդլայնման գործընթացի շրջանակներում:

Հարկ է նշել, որ, թեև ԵՀՄԿ-ն իրականացնում է նախաձեռնության ընդհանուր ղեկավարումը և նախանշում է դրա երկարաժամկետ ռազմավարությունը, նա անմիջականորեն չի ղեկավարում և չի վերահսկում նախաձեռնության գործունեությունը: Բառի բուն իմաստով ոչ ոք չի ղեկավարում Երկրի Հրովարտակի նախաձեռնությունը: Խորհուրդը պատասխանատու է միայն ԵՀՄԿ-ի ղեկավարման համար:

Երկրի Հրովարտակի հանձնաժողով

Երկրի Հրովարտակի միջազգային հանձնաժողովը ստեղծվել է “Երկրի /Երկրագնդի/ խորհուրդ” և “Կանաչ խաչ” միջազգային կազմակերպությունների կողմից 1997 թ. սկզբին՝ անկախ միջազգային կառույցի կարգավիճակով: Հանձնաժողովը հսկել ու համակարգել է Երկրի Հրովարտակի քննարկման ու մշակման գործընթացը, հավանություն տվեց Հրովարտակի վերջին տեքստին և 2000 թ. ներկայացրեց Երկրի Հրովարտակը երկրագնդի հանրությանը: Հանձնաժողովը ճանաչվել է որպես Երկրի Հրովարտակի տեքստի ավանդապահ, հանձնաժողովի անդամները հանդիսանում են ԵՀ միջազգային կազմակերպության խորհրդատուներ և Երկրի Հրովարտակի պատվիրակներ: Այնուամենայնիվ, հանձնաժողովը այլևս չի զբաղվում նախաձեռնության հսկողությամբ: Այդ լիազորությունը վերապահվել է Երկրի Հրովարտակի միջազգային կազմակերպության խորհրդին:

ԵՀՄԿ խորհուրդը

ԵՀՄԿ խորհուրդը ղեկավարում է Երկրի Հրովարտակի քարտուղրության աշխատանքը: Նա սահմանում է ԵՀՄԿ հիմնական նպատակները, քաղաքականությունը ու ռազմավարությունը և ապահովում է նախաձեռնության քաղաքականության զարգացումը: ԵՀՄԿ խորհուրդը իրավական անձ չէ: Խորհուրդը իր անդամների ընտրությունը կատարում է, խորհրդակցելով Երկրի Հրովարտակի համաշխարհային ցանցի կողմնակիցների հետ:

ԵՀՄԿ քարտուղարությունը

ԵՀՄԿ քարտուղարությունը, որը տեղակայված է Կոստա-Ռիկայի համալսարանում, ջանք է գործադրում կյանքի կոչելու ԵՀՄԿ խորհրդի առաքելությունը, տեսլականը, ռազմավարությունը ու քաղաքականությունը: Այն աջակցում է խորհրդի աշխատանքին, ռազմավարական ծրագրավորմանը և համակարգում է Երկրի Հրովարտակի բազմաթիվ միջոցառումները: Քարտուղարությունը ղեկավարում է Երկրի Հրովարտակի ներմուծումը կրթական ոլորտ, երիտասարդության կյանք, բիզնեսի ոլորտ, իրականացնում է կապը Երկրի Հրովարտակի կրոնական շրջանակների ու լայն միջազգային ցանցի հետ և օժանդակում է Երկրի Հրովարտակի կիրառումը որպես միջազգային ոչ պարտադիր իրավունքի փաստաթուղթ:

Ընկերակիցներ /ներկայացուցիչներ/

ԵՀՄԿ ընկերակիցներ են հանդիսանում անհատներ կամ կազմակերպություններ, որոնք կիսում են Երկրի Հրովարտակի գաղափարները և աջակցում են Երկրի Հրովարտակի տարածմանը և ԵՀՄԿ ռազմավարության կիրառմանը իրենց երկրներում: Ընկերակիցները, ԵՀՄԿ-ի հետ պաշտոնական համաձայնագիր կնքելով, դառնում են Երկրի Հրովարտակի տեղեկությունների և գործունեությունների աղբյուր իրենց երկրներում: ԵՀՄԿ քարտուղարությունը համակարգում է ընկերակիցների հետ համագործակցությունը, տրամադրում է իրենց ուղեցույցներ և նյութեր: Մեկ երկրում հնարավոր է մեկից ավել ընկերակցի առկայությունը: Ընկերակիցները համաձայն են սերտ կապ հաստատել ԵՀՄԿ -ի հետ և տեղեկություններ տալ Երկրի Հրովարտակին առնչվող իրենց երկրներում տեղի ունեցող կարևոր միջոցառումների մասին: Իր հերթին, ԵՀՄԿ-ն պարտավոր է տեղեկացված պահել ընկերակիցներին իրենց վերաբերող գլխավոր որոշումների և միջոցառումների մասին, տրամադրել որոշակի ձեռնարկներ, ռազմավարական խորհուրդներ և հաղորդակցման աջակցություն (մակարդակը կախված է հնարավոր միջոցներից):

Գործընկեր կազմակերպություններ

Ռազմավարական գործընկեր են հանդիսանում այն կազմակերպությունները, որոնց գործունեությունը խթանում է Երկրի Հրովարտակի նախաձեռնությունը, կամ որոնց

գործունեությունը համահունչ է Երկրի Հրովարտակի սկզբունքներին: Հիմնականում դա միջազգային կազմակերպություններ են, սակայն դրանց թվում են նաև առանձին ազգային կամ տեղական կազմակերպություններ: Գործընկեր կազմակերպությունները Երկրի Հրովարտակի միջազգային կազմակերպության հետ կնքում են համաձայնագրեր (օրինակ, համաձայնագրեր համագործակցության մասին, փոխըմբռնման հուշագրեր և այլն):

Կողմնակիցներ

Երկրի Հրովարտակի կողմնակիցներն են ցանկացած անհատներ կամ կազմակերպություններ, որոնք պաշտոնապես հայտնել են Երկրի Հրովարտակի գաղափարներին ու նպատակներին իրենց քաջալերության և աջակցության մասին: Երկրի Հրովարտակի կողմնակից կարող են լինել առանձին անհատներ, ինչպես նաև ցանկացած կազմով կազմակերպություններ: ԵՀՄԿ քարտուղարությունը սկստիվ գործունեություն է ծավալում նախաձեռնության կողմնակից դարձնելու միջազգային և ազգային խոշոր կազմակերպություններին:

Խորհրդականներ

ԵՀՄԿ խորհրդականներ են հանդիսանում համապատասխան ոլորտներում ճանաչված անհատ փորձագետները, որոնք կարող են ԵՀՄԿ խորհրդի ու քարտուղարության համար հանդես գալ որպես գիտելիքների ու փորձի աղբյուր և աջակցություն ցուցաբերել այդ կառույցների գործունեությանը: Աշխատելու որպես խորհրդականներ հրավիրվում են Երկրի Հրովարտակի գաղափարներին նվիրված բոլոր այն անհատները, որոնք պատրաստ են իրենց գիտելիքներով ու փորձով սկստիվ աջակցություն ցուցաբերելու ԵՀՄԿ խորհրդին, քարտուղարությանը ու նպատակային խմբին, նաև, անհրաժեշտության դեպքում, դրանց մասնաճյուղ կազմակերպություններին: Խորհրդականներին նշանակում է քարտուղարության գործադիր տնօրենը:

Նպատակային խմբեր

Նպատակային խմբերը կոչված են գործելու որպես անկախ նախաձեռնությունների կամավոր միավորումներ: Նպատակային խմբերի խնդիրն է հանդիսանում ստեղծել ցանցեր և աջակցել գործունեության հետևյալ բնագավառներում՝ բիզնես, կրթություն, լրատվամիջոցներ, կրոնական շրջանակներ, երիտասարդություն, Միացյալ ազգերի կազմակերպություն: Համաձայն ԵՀՄԿ խորհրդի գործադիր կոմիտեի մտադրությանը, նպատակային խմբերում պետք է ընդգրկվեն խորհրդի անդամները, անհատները, գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչները, խորհրդականներ: ԵՀՄԿ խորհուրդը պարբերաբար կգնահատի յուրաքանչյուր նպատակային խմբի աշխատանքը և առաջընթացը: Միևնույն ժամանակ ԵՀՄԿ խորհուրդը ու ԵՀՄԿ քարտուղարությունը մտադիր չեն անմիջականորեն ղեկավարելու կամ հսկելու նպատակային խմբերի աշխատանքը:

Կամավորականներ / աջակցողներ

Կամավորականներ կամ աջակցողներ են հանդիսանում այն կողմնակիցներն, որոնք տրամադրում կամ նվիրում են Երկրի Հրովարտակին իրենց ռեսուրսները՝ ժամանակը, ֆինանսներ, կապերը, խթանում են դրա լայն պրոպագանդան, նաև կատարում այլ ներդրում՝ իրենց հնարավորությունների սահմաններում: Կամավորականների դերում կարող են հանդես գալ կազմակերպություններ, կառավարություններ, անհատներ:

Կամավորականները կամ աջակցողները Երկրի Հրովարտակի նկատմամբ ունեն կարգավիճակ, ինչպիսին է սովորական ՀԿ-ների անդամների կարգավիճակը, իսկ բացառությամբ, որ միջազգային նախաձեռնությունը չի հանդիսանում այն ֆորմալ իրավական

անձ, իսկ կամավորները իրենց կարգավիճակից ելնելով, չեն հետապնդում որևէ ֆորմալ իրավունք կամ արտոնություն:

ԵՐԿՐԻ ՀՐՈՎԱՐՏԱԿԻ ՆԱԽԱՁԵՆՈՒՌՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1987թ. ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի և զարգացման համաշխարհային հանձնաժողովը (Brundtland Commission) առաջարկում է ստեղծել շրջակա միջավայրի պահպանության և կայուն զարգացման վերաբերյալ համընդհանուր հռչակագիր՝ մի նոր հրովարտակի տեսքով, որը կձևավորի կայուն զարգացման հիմնական սկզբունքները:

1992թ. Ռիո դե Ժանեյրոյում տեղի ունեցած Երկրի գագաթաժողովի նպատակներից մեկն էր մշակել միջազգայնորեն ընդունվող Երկրի Հրովարտակը: Մակայն, կառավարություններին չի հաջողվում գալ համաձայնության, և փոխարենը նրանք ընդունում են Ռիոյի շրջակա միջավայրի և զարգացման հռչակագիր:

Ռիոյի գագաթաժողովի գլխավոր քարտուղարի՝ Մորիս Սթրոնգի ղեկավարությամբ ստեղծվում է Երկրի խորհուրդ, որի նպատակն է խթանել Երկրի գագաթաժողովի որոշումների կիրառումը և խթանել կայուն զարգացման ազգային խորհուրդների ստեղծումը:

1994թ. Երկրի խորհրդի նախագահ Մորիս Սթրոնգը և Միջազգային կանաչ խաչի նախագահ Միխայիլ Գորբաչևը հայտարարում են Երկրի Հրովարտակի նախնական փաստաթուղթը ստեղծելու հասարակական նախաձեռնության մասին: Հոլանդիայի կառավարությունը տրամադրում է նախնական ֆինանսական աջակցություն:

1995թ. Երկրի խորհուրդը և Միջազգային կանաչ խաչը միջազգային խորհուրդատվություններ են կազմակերպում, որոնք նպատակ են ունենում ձևավորել ժողովրդական Երկրի Հրովարտակ. Հաագայի Երկրի խորհրդի կլոր սեղանի շուրջ հանդիպում են միջազգային փորձագետներ և կառավարությունների ներկայացուցիչներ: Երկրի խորհուրդը դառնում է Երկրի Հրովարտակի նախաձեռնության միջազգային քարտուղարություն:

1996թ. “Ռիո+5” ֆորումի նախապատրաստական փուլում, Երկրի խորհուրդը նախաձեռնում է Երկրի Հրովարտակի խորհրդատվական գործընթաց: Ստեղծվում և շրջանառության մեջ են մտնում Երկրի Հրովարտակին առնչվող միջազգային օրենսդրության սկզբունքների ամփոփագիրը և վերլուծությունները: Տարեվերջում, Երկրի խորհուրդը և Միջազգային կանաչ խաչը ձևավորում են Երկրի Հրովարտակի անկախ հանձնաժողով, որի նպատակն է՝ վերահսկել Երկրի Հրովարտակի մշակման գործընթացը: Ստեղծվում է նաև մշակման կոմիտե:

1997թ. Երկրի Հրովարտակի հանձնաժողովը իր առաջին հանդիպումը հրավիրում է “Ռիո +5” համաժողովում, որի արդյունքում լույս է տեսնում Երկրի Հրովարտակի առաջին նախագիծը, որպես հետագա զարգացում պահանջող նախնական փաստաթուղթ: Դրա շուրջ նախաձեռնվում և կազմակերպվում են համաշխարհային խորհրդակցություններ:

1998թ. Երկրի Հրովարտակի նախաձեռնությանը միանում են զանազան խմբեր և կազմում Երկրի Հրովարտակի ազգային կոմիտեներ ավելի քան 35 երկրներում: Այդ, և բազմաթիվ այլ խմբերը կազմակերպում են խորհրդակցություններ նախագծի շուրջ և սկսում են օգտագործել այն որպես կրթական միջոց:

1999թ. Ապրիլին լույս է տեսնում Երկրի Հրովարտակի երկրորդ նախագիծը, և շարունակվում են կազմակերպվել միջազգային խորհրդակցություններ: Երկրի Հրովարտակի ազգային կոմիտեների թիվը հասնում է 45-ի:

2000թ. Մարտին Երկրի Հրովարտակի հանձնաժողովը հավաքվում է Փարիզում, որպեսզի համաձայնության գա փաստաթղթի վերջնական տարբերակի վերաբերյալ: Երկրի Հրովարտակի պաշտոնական հրատարակումը տեղի է ունենում հունիսին, Հաագայի Խաղաղության պալատում: Ստեղծվում է Երկրի Հրովարտակի ղեկավար կոմիտե՝ նախաձեռնության հաջորդ փուլը վերահսկելու նպատակով: Հիմնական նպատակներն են՝ խթանել Երկրի Հրովարտակի տարածումը և կիրառումը քաղաքացիական հասարակության, գործարար շրջանների և իշխանությունների կողմից, ինչպես նաև աջակցել դպրոցներում և համալսարաններում Երկրի Հրովարտակի կրթական կիրառմանը:

2002թ. Երկրի Հրովարտակի նախաձեռնությունը հսկայական ջանքեր է գործադրում, որպեսզի ապահովի Երկրի Հրովարտակի ընդունումը Յոհանեսբուրգում տեղի ունեցող Կայուն զարգացման համաշխարհային գագաթաժողովի կողմից: Սույն Գագաթաժողովի ընթացքում մի շարք կառավարությունների ղեկավարներ և ՀԿ-ներ իրենց պատրաստակամությունն են հայտնում Երկրի Հրովարտակի սատարման հարցում, սակայն այդպես էլ ՄԱԿ-ի կողմից Երկրի Հրովարտակի պաշտոնական ճանաչումը տեղի չի ունենում:

2005թ. Երկրի Հրովարտակն արդեն թարգմանված է 32 լեզուներով, լայն տարածում է գտել ամբողջ աշխարհում և ընդունվել ավելի քան 4800 կազմակերպությունների կողմից, ներառյալ ՅՈՒՆԵՍԿՕ-ն (UNESCO), Բնության պահպանության միջազգային միությունը (IUCN) և Տեղական բնապահպանական նախաձեռնությունների միջազգային խորհուրդը (ICLEI): Այս ընթացքում սկսվում է Երկրի Հրովարտակի նախաձեռնության 2000-2005թթ. գործունեության ներքին և արտաքին ռազմավարական ամփոփումները: Նոյեմբերին Ամստերդամում տեղի է ունենում “Երկրի Հրովարտակ+5” համաժողովը: Այս կապակցությամբ ավարտին է հասցվում հնգամյա ռազմավարական ամփոփումը, մատնանշվում են ձեռքբերումները և կազմվում ծրագրեր հաջորդ փուլի համար:

2006թ. Ղեկավար կոմիտեին փոխարինելու է գալիս Երկրի Հրովարտակի 23 անդամ ունեցող նոր միջազգային խորհուրդը, որը լիազորված է լինում վերանայել քարտուղարության հիմնական ծրագրերն ու աշխատակազմը: Խորհուրդը և քարտուղարությունը վերակազմավորվում են, ստեղծելով “Երկրի Հրովարտակ” միջազգային կազմակերպությունը:

2008թ. Այս շրջանում Երկրի Հրովարտակը թարգմանվում է 40 լեզուներով և ընդունվում 4600 կազմակերպությունների կողմից, որոնք ներկայացնում են միլիոնավոր մարդկանց շահերը: Երկրի Հրովարտակի միջազգային կազմակերպության խորհուրդը ընդունում է նոր երկարատև ռազմավարական ծրագիր, որը շեշտադրում է Երկրի Հրովարտակի նախաձեռնության ապակենտրոնացված տարածումը: Բիզնեսի, կրթության, լրատվության, կրոնի, երիտասարդության և ՄԱԿ-ի ոլորտներում ստեղծվում են 6 նոր անկախ նպատակային խմբեր՝ ապակենտրոնացված տարածումը խթանելու նպատակով:

Երկրի Հրովարտակի ընդունումը

Տարբեր անհատների կամ կազմակերպությունների կողմից Երկրի Հրովարտակի ընդունումը վկայում է այդ փաստաթղթի հոգուն և շնչին լայն նվիրվածության մասին: Դա ապացուցում է նույնպես, որ մեծ քանակությամբ անհատներ ու կառույցներ մտադիր են օգտագործել Երկրի Հրովարտակը՝ կոնկրետ իրավիճակին հարիր ուղիներով: Ընդունումը ենթադրում է նաև նվիրված աշխատանք՝ Երկրի Հրովարտակի սկզբունքների և արժեքների իրագործմամբ ու պահպանմամբ, ինչպես նաև մյուսների հետ համագործակցելու պատրաստակամություն:

Գոյություն ունեն բազմաթիվ այլ միջոցներ, որոնք կարող են օգնել կատարելագործելու Երկրի Հրովարտակի նպատակները: Օրինակ, որևէ կազմակերպություն կարող է կիրառել այդ փաստաթուղթն իր գործունեության վերանայման նպատակով՝ ձգտելով ավելի լավ արտացոլել Երկրի Հրովարտակի սկզբունքները: Կազմակերպությունը կարող է նաև ներառել Երկրի Հրովարտակն իր կրթական ծրագրերում:

Երկրի Հրովարտակի ընդունումը բաց է ցանկացած անհատի և կազակերպության համար: “Երկրի Հրովարտակ” միջազգային կազմակերպությունը ջանքեր է ձեռնարկում Երկրի Հրովարտակի ընդունումը հաստատելու համար, և ստացվում է այնպես, որ ընդունումն իր մեջ ներառում է մի համաձայնագիր, որի հիման վրա ընդունողը հասարակայնորեն ճանաչվում է որպես Երկրի Հրովարտակը Ընդունող:

Հայտարարություն ընդունման վերաբերյալ:

Դուք կարող եք ընդունել Երկրի Հրովարտակը ինտերնետի միջոցով կամ մեզ ուղարկել ձեր ընդունման հաղորդագրությունը՝ օգտագործելով հետևյալ ձևաչափը.

”Մենք՝ ներքոստորագրյալներս, ընդունում ենք Երկրի Հրովարտակը: Մենք ընդունում ենք փաստաթղթի գաղափարներն ու նպատակները: Մենք պարտավորվում ենք միանալ գլոբալ համագործակցությանը արդար, բազմակողմանի և խաղաղ աշխարհի կառուցման նպատակով և աշխատել հանուն Երկրի Հրովարտակի սկզբունքների և արժեքների իրականացման”:

Ենթադրվում է, որ Ընդունողը նույնպես պետք է՝

- ակտիվորեն խթանի Երկրի Հրովարտակի իրագործմանը և հետևի Գործունեության ուղեցույցին, որը նշված է 6-րդ գլխում,
- առավելագույնս աջակցի Երկրի Հրովարտակի նախաձեռնությանը և Երկրի Հրովարտակի ծրագրերին,
- կիրառի Երկրի Հրովարտակն իր աշխատանքային գործունեությունում և անձնական կյանքում:

Երկրի Հրովարտակի նախաձեռնության համառոտ պատմությունը

Երկրի Հրովարտակը ժողովրդական հռչակագիր է գլոբալ փոխկախվածության և համընդհանուր պատասխանատվության վերաբերյալ, որը երևան է բերում արդար, կայուն և խաղաղ աշխարհի կառուցելու հիմնական սկզբունքներ: Նա փորձում է ճանաչել այն հիմնական մարտահրավերները, որոնք սպառնում են մարդկությանը 21-րդ դարում: Երկրի Հրովարտակի սկզբունքները ձևավորված են ծառայելու իբրև մի ”համընդհանուր չափանիշ, որով պետք է կարգավորվի և գնահատվի բոլոր անհատների, կազմակերպությունների, գործարար շրջանների, իշխանությունների և անդրազգային հաստատությունների վարքը” (Երկրի Հրովարտակի ներածական):

Երկրի Հրովարտակը տասնամյա համաշխարհային, բազմամշակութային երկխոսության արդյունք է: Այս գործընթացը, ներառելով առավել բաց խորհրդովական աշխատանք միջազգային փաստաթղթի մշակման հարցում, հանդիսանում է Երկրի Հրովարտակի՝ իբրև էթիկական ուղեցույցի օրինականության հիմնական դրույթ:

1. Երկրի Հրովարտակի սկզբնաղբյուրները

“Մեր ընդհանուր ապագան” (1987)՝ Շրջակա միջավայրի և զարգացման համաշխարհային հանձնաժողովի (WCED) զեկույցը, այլ առաջարկությունների հետ մեկտեղ, կոչ է արել ստեղծել ”Շրջակա միջավայրի պահպանության և կայուն զարգացման համընդհանուր հռչակագրի”, որը

կունենար ”մի նոր հրովարտակի ” տեսք՝ պարունակելով այնպիսի սկզբունքներ, որոնք կուղեկցեին ազգերին իրենց կայուն զարգացման գործընթացում:

Հիմնվելով այս առաջարկությունների վրա, Մորիս Սթրոնգը՝ 1992թ-ի Ռիոյի Երկրի Գազաթաժողովի քարտուղարը, 1990 թ-ին առաջարկեց, որպեսզի Գազաթաժողովը մշակի Երկրի Հրովարտակը և ընդունի այն: Ռիոյի Գազաթաժողովի նախապատրաստական աշխատանքների շրջանում անցկացվեցին միջկառավարական խորհրդակցություններ, սակայն Երկրի Հրովարտակի սկզբունքների վերաբերյալ համաձայնություն ձեռք չբերվեց: Ռիոյի Գազաթաժողովի Հռչակագիրը պարունակում է մի շարք արժեքավոր սկզբունքներ, սակայն դրա մեջ բացակայում են էթիկային վերաբերող սկզբունքները, այսինքն այն, ինչ մարդիկ հույս ունենին գտնել Երկրի Հրովարտակի մեջ:

Այդ պատճառով, Մորիս Սթրոնգը՝ որպես Երկրի /Երկրագնդի/ Խորհրդի նախագահ, 1994թ. միանում է Կանաչ խաչի նախագահ Միխաիլ Գորբաչևին՝ նոր Երկրի Հրովարտակի նախաձեռնության նպատակով: Սթրոնգին և Գորբաչևին ծանոթացրել էին WCED-ի գլխավոր քարտուղար Ջիմ Մաք-Նեյլը, Նեդերլանդների Թագուհի Բեստրիսը և Վարչապետ Ռուուդ Լուբերսը: Հոլանդիայի կառավարությունը տրամադրեց նախնական ֆինանսական աջակցություն: Նախատեսվում էր վարել այդ ծրագիրը, որպես քաղաքացիական հասարակության նախաձեռնություն, և մշակել մի հրովարտակ, որը կարտացոլեր գլոբալ քաղաքացիական հասարակության առաջացող համաձայնությունը համընդհանուր արժեքների և սկզբունքների նկատմամբ՝ հանուն կայուն ապագայի:

1995 թ. սկսվեց Երկրի Հրովարտակի ծրագիրը, որի առաջին գործադիր տնօրենն էր Ալժիրի դեսպան Մուհամեդ Սահնունը: Ծրագիրը իրենից ներկայացնում էր նոր միջազգային բանակցությունների գործընթաց և ուսումնասիրություններ՝ էկոլոգիական բարոյականության, կայուն զարգացման ու միջազգային իրավունքի բնագավառներում:

Մաքսիմո Կալաոյի (Ֆիլիպիններ)՝ Երկրի խորհրդի գործադիր տնօրենի ղեկավարությամբ Կոստա Ռիկայում հիմնադրվեց Երկրի Հրովարտակի քարտուղարությունը: 1996թ. Միրիան Վիլելան (Բրազիլիա) դարձավ Երկրի Հրովարտակի գործունեության համակարգողը Երկրի խորհրդում: 1996 թ. ավարտին ստեղծվեց Երկրի Հրովարտակի հանձնաժողովը՝ փաստաթղթի մշակման գործընթացը վերահսկելու նպատակով, որի համանախագահներն էին Մորիս Սթրոնգը և Մ.Գորբաչևը, կազմի մեջ մտնում էին 23 նշանավոր անձինք, որոնք ներկայացնում էին աշխարհի բոլոր հիմնական դավանանքները: Հանձնաժողովը՝ Երկրի Հրովարտակի նախագիծը մշակող միջազգային նախապատրաստական կոմիտեի կազմման և ղեկավարման համար ԱՄՆ-ից հրավիրեց կրոնի և էթիկայի պրոֆեսոր Ստիվեն Ռոքֆելլերին: Նախապատրաստական գործընթացը, որը սկսվել էր 1997թ. հունվարին, տևեց 3 տարի:

Երկրի Հրովարտակի ստեղծմանը մասնակցել են հարյուրավոր կազմակերպություններ և հազարավոր անհատներ: Ստեղծվել էր Երկրի Հրովարտակի 45 ազգային կոմիտե: Երկրի Հրովարտակի երկխոսություններ են տարվել ամբողջ աշխարհում և ինտերնետով, իսկ Ասիայում, Աֆրիկայում, Կենտրոնական և Հարավային Ամերիկայում և Եվրոպայում անց են կացվել խոշոր տարածաշրջանային կոնֆերանսներ: Երկրի Հրովարտակի գաղափարները և արժեքները արտացոլում էին բազմաթիվ ինտելեկտուալ աղբյուրների և հասարակական շարժումների ազդեցությունը: Այն ներառում է աշխարհի դավանանքների իմաստությունը, մեծ փիլիսոփայական ավանդույթներ և նոր գիտական աշխարհայացք, որն այլ դիսցիպլինների հետ մեկտեղ, կրում էր կոսմոլոգիայի ու բնապահպանության ազդեցությունը: Երկրի Հրովարտակը պետք է դիտվի որպես գլոբալ բարոյական շարժման արդյունք, որը շեշտադրում է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը՝ մեծ աջակցություն վայելելով 1990-ականներին:

Նախապատրաստական կոմիտեն սերտ համագործակցում էր Բնության պահպանության միջազգային միության (IUCN) Միջազգային իրավունքի հանձնաժողովի հետ և մանրագնհին ուսումնասիրել էր համապատասխան միջազգային իրավունքի բոլոր հռչակագրերը և պայմանագրերը, ինչպես նաև ավելի քան 200 քաղաքացիական հռչակագրեր ու պայմանագրեր: Երկրի Հրովարտակը հիմնվում է միջազգային բնապահպանական և կայուն զարգացման իրավունքի վրա, և իր հերթին հարստացնում այն: Հռչակագիրը արտացոլում է այն մտավախությունները և ձգտումները, որոնք հնչեցվել են ՄԱԿ-ի 7 գազաթաժողովների ժամանակ, որոնք տեղի են ունեցել 1990-ականներին՝ բնապահպանության, մարդու իրավունքների, բնակչության, երեխաների, կանանց, սոցիալական զարգացման և քաղաքների հիմնահարցերի շուրջ:

Երկրի Հրովարտակի վերջնական տարբերակը, որը վավերացվել է 2000թ. մարտին Փարիզում, ՅՈՒՆԵՍԿՈ-ի գլխավոր գրասենյակում կայացած Երկրի Հրովարտակի հանձնաժողովի նիստի ընթացքում, պարունակում է նախաբան, 16 հիմնական սկզբունքներ, 61 օժանդակող սկզբունքներ և վերջաբան, որը կոչվում է "Ճանապարհ դեպի առաջ": Նախաբանը հաստատում է, որ "մենք միասնական Երկրի ընդհանուր ճակատագիր ունեցող միասնական մարդկային ընտանիք և համակեցություն ենք", իսկ Երկրի Հրովարտակը կոչ է անում բոլոր մարդկանց ճանաչել իրենց պատասխանատվությունը՝ յուրաքանչյուրն իր կարգավիճակի հնարավորությունների համաձայն, հանուն ողջ մարդկության գալիք սերունդների բարեկեցության: Ճանաչելով մարդկության բնապահպանական, տնտեսական, հասարակական, մշակութային խնդիրների փոխկապակցվածությունը՝ Երկրի Հրովարտակը իրենից ներկայացնում է ամբողջական էթիկական շրջանակ:

Սկզբունքների չորս բաժինների անվանումները մատնանշում են տեսության բազմակողմանիությունը՝ I. Հարգել և հոգալ ամենայն շնչավորի համակեցության մասին, II. Էկոլոգիական ամբողջականություն, III. Սոցիալական ու տնտեսական արդարություն. IV. Ժողովրդավարություն, հրաժարում բռնությունից ու խաղաղություն:

Երկրի Հրովարտակը ընդունում է լայն տարածում գտած մի շարք հոգևոր մոտեցումներ և արժեքներ, որոնք ամրապնդում են նվիրվածությունը վերջինիս բարոյական սկզբունքների հանդեպ: Այս փաստաթուղթը ավարտվում է խաղաղ կյանքի պայծառ ընկալման կոչով:

2. Երկրի Հրովարտակի նախաձեռնությունը 2000-2005 թվերին

Երկրի Հրովարտակի նախաձեռնության երկրորդ փուլը սկիզբ է առել Երկրի Հրովարտակի պաշտոնական ներկայացմամբ 2000թ. հունիսին Հաագայի Խաղաղության պալատում: Այնուհետև, Երկրի Հրովարտակի հանձնաժողովը հանձնեց Երկրի Հրովարտակի նախաձեռնության վերահսկողության և ֆինանսական միջոցների հայթայթման պատասխանատվությունը նորաստեղծ Ղեկավար կոմիտեին, որն իր մեջ ներառում էր նաև Երկրի Հրովարտակի հանձնաժողովի մի քանի անդամներ: Կոմիտեն ստանձնեց պատասխանատվություն Երկրի Հրովարտակի բովանդակության վերաբերյալ, իսկ անդամները շարունակում էին խորհրդատվություն և աջակցություն ցուցաբերել անհատական հիմունքներով: 2000թ. Միրիան Վիլելյան ստանձնեց Երկրի Հրովարտակի քարտուղարության տնօրենի պաշտոնը Խաղաղության համալսարանում: Հաջորդ 5 տարիների ընթացքում Երկրի Հրովարտակը թարգմանվեց 40 լեզուներով և ընդունվեց 2500 կազմակերպությունների կողմից, որոնք ներկայացնում են միլիանավոր մարդկանց շահերը: Այդ կազմակերպությունների թվին են պատկանում ՅՈՒՆԵՍԿՈ-ն, Բնության պահպանության համաշխարհային միությունը (IUCN), Տեղական բնապահպանական նախաձեռնությունների միջազգային խորհուրդը (ՏԻՄ-երը՝ հանուն կայունության նշանաբանով /ICLEI/) և ԱՄՆ-ի Քաղաքապետերի կոնֆերանսը:

Երկրի Հրովարտակը իրենից ներկայացնում է կայուն զարգացման ու խաղաղության հիմնական բաղադրատարրերի փայլուն հավաքածու, որը երկար ժամանակ կիրառվել է որպես դասավանդման միջոց դպրոցներում, քոլեջներում, համալսարաններում, ոչ պաշտոնական կրթական ծրագրերում:

2002թ. Յոհանեսբուրգի Կայուն զարգացման համաշխարհային գագաթաժողովին մեծ ջանքեր են գործադրվել Երկրի Հրովարտակի ճանաչման ուղղությամբ: Գագաթաժողովի ընթացքում մի շարք համաշխարհային առաջնորդներ, պետությունների նախագահներ, ինչպես նաև մեծ թվով ՀԿ-ներ հայտարարեցին Երկրի Հրովարտակին սատարելու մասին: Յոհանեսբուրգի Հոչակագրի վերջնական տարբերակում չկա հստակ հղում Երկրի Հրովարտակի վրա: Մակայն Հրչակագրով հաստատվում է Երկրի Հրովարտակի գլխավոր թեման, երբ, օգտագործելով Երկրի Հրովարտակի լեզուն, այնտեղ նշվում է, որ “մենք հայտնում ենք մեր պատասխանատվությունը միմյանց կյանքի, մեր համայնքի, մեր երեխաների հանդեպ”: Այժմ նպատակաուղիված միջոցներ են ձեռնարկվում՝ ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից Երկրի Հրովարտակի պաշտոնական ճանաչման համար:

2005թ. դրությամբ Երկրի Հրովարտակն արդեն լայն ճանաչում էր ստացել, որպես գլոբալ համաձայնության /կոնսենսուսի/ հրչակագիր՝ կայունության դրույթների, կայուն զարգացման մարտահրավերների ու տեսլականի և կայուն զարգացմանը հասնելու սկզբունքների վերաբերյալ: Այն հիմք է հանդիսանում խաղաղության հարցերով բանակցությունների, կառավարման և օրենսդրական գործընթացների համար, դրա վրա հղումներ են կատարում էթիկայի գլոբալ չափանիշները ու նորմերը մշակելիս, այն ծառայում է որպես համայնքների զարգացման գործոն, որպես կայուն զարգացման կրթական ծրագրերի հիմք: Երկրի Հրովարտակը կարևոր ազդեցություն ունեցավ նաև ՄԱԿ-ի “Կրթություն հանուն կայուն զարգացման” Տասնամյակի իրականացման պլանի մշակման վրա, “Երկրի Հրովարտակ” միջազգային կազմակերպությունը դարձավ ՅՈՒՆԵՍԿՈ-ի գործընկերը Տասնամյակի խթանման հարցում:

2005թ. Ղեկավար կոմիտեն սկսեց Երկրի Հրովարտակի նախաձեռնության առաջընթացի, ուժեղ կողմերի ու թերությունների ռազմավարական ուսումնասիրություն/քննարկում: Այն ներառում էր ինչպես ներքին, այնպես էլ արտաքին գնահատում: Արտաքին գնահատումը կատարեց կայուն զարգացման բնագավառում միջազգային խորհրդատու Ալան Աթքինսոնը: Գնահատման գործընթացի արդյունքում եկան այնպիսի եզրահանգման, որ 2000-2005թթ. ժամանակահատվածում մեծ ձեռքբերումներ են գրանցվել: Նախաձեռնությունը բավականին խոստումնալից է, որ այդ գործընթացը շարունակական պետք է լինի, սակայն ապագա հաջողությունները պահանջում են կառավարման համակարգի և երկարաժամկետ ռազմավարական ծրագրավորման վերակառուցում:

Ռազմավարական գնահատման գործընթացը ավարտին էր հասել Նեդերլանդներում տեղի ունեցած Երկրի Հրովարտակի կոնֆերանսի ժամանակ, որը կազմակերպվել էր Նեդերլանդների Կայուն զարգացման միջազգային համագործակցության ազգային կոմիտեի կողմից (NCDO)՝ միաբանելով Երկրի Հրովարտակի ավելի քան 400 առաջնորդների/ակտիվիստների: Այդ կոնֆերանսի ժամանակ ընդունվեց Ղեկավար կոմիտեի որոշում՝ Ալան Աթքինսոնին նշանակել Երկրի Հրովարտակի քարտուղարության գործադիր տնօրեն:

Նեդերլանդների կոնֆերանսի ընթացքում Ամստերդամի KIT տպագրատանը մի գիրք լույս տեսավ, որն անվանվում է “The Earth Charter in Action: Towards Sustainable World” (“Երկրի Հրովարտակը գործում. Դեպի կայուն աշխարհ”): Այս հրատարակությունը պարունակում է 60 հոդված, որոնք գրառվել են Երկրի Հրովարտակի մի շարք առաջնորդների և աջակիցների

կողմից ողջ աշխարհով մեկ, և իրենից ներկայացնում է Երկրի Հրովարտակի նշանակության և Երկրի Հրովարտակի առնչությամբ գործունեության դերի վերաբերյալ արժեքավոր ամփոփագիր:

III. Երկրի Հրովարտակի նախաձեռնությունը 2006 թ-ից մինչ այսօր

2006թ. Երկրի Հրովարտակի քարտուղարությունը վերակառուցվեց “Երկրի Հրովարտակ” միջազգային կազմակերպությանը (ԵՀՄԿ): 23 անդամներից բաղկացած ԵՀՄԿ-ի նորաստեղծ խորհուրդը եկավ փոխարինելու Ղեկավար կոմիտեին և ղեկավարելու ԵՀՄԿ -ի հիմնական ծրագրերն ու աշխատակազմը: Ստիվեն Ռոքֆելլերը, Ռազինա Վազիթը՝ Հարավային Աֆրիկայից և Էռնա Վիտոելառը՝ Ինդոնեզիայից, ընտրվում են նորաստեղծ ԵՀՄԿ խորհրդի համանախագահներ: Շվեդիայի մայրաքաղաք Ստոկհոլմում ստեղծվեց Երկրի Հրովարտակի Կապերի ռազմավարական պլանավարման կենտրոն: Երկրի Հրովարտակի նախկին քարտուղարությունը Խաղաղության համալսարանում վերափոխվեց Երկրի Հրովարտակի Կայուն զարգացման կրթության կենտրոնի: “Երկրի Հրովարտակ” միջազգային կազմակերպության խորհուրդը ստանձնեց նոր առաքելություն և սկսեց ձևավորել նոր ռազմավարություն ու քաղաքականություն երրորդ փուլի համար:

Ազգային իշխանությունները սկսեցին ավելի հստակ պաշտոնապես խրախուսել Երկրի Հրովարտակը: Բրազիլիայի Բնապահպանության նախարարությունը պաշտոնական պայմանագիր կնքեց “Երկրի Հրովարտակ” միջազգային կազմակերպության քարտուղարության և Պետրոպոլիսի Մարդու իրավունքների պաշտպանության կենտրոնի հետ, այդպիսով խթանելով Երկրի Հրովարտակի կիրառումը Բրազիլիայի հասարակության յուրաքանչյուր սեկտորում:

Երկրի Օրվա 2007թ. Նախագահական տոնակատարությունների ժամանակ Մեքսիկայի Կառավարության կրթության ու բնապահպանության նախարարները հրապարակավ հայտնեցին իրենց պատրաստակամությունը կիրառելու Երկրի Հրովարտակը մեքսիկական դպրոցական համակարգում, որպես կրթական միջոց: Այլ պետական ու քաղաքական իշխանություններ պատրաստակամություն հայտնեցին կամ աջակցեցին Երկրի Հրովարտակի պաշտոնական ընդունման և կիրառման նախաձեռնությանը: Դրանց թվին են պատկանում Քվինսլենդի նահանգը, (Ավստրալիա), Թաթարստանի Հանրապետությունը (Ռուսաստանի Դաշնություն), այնպիսի քաղաքներ, ինչպես Քալգարին (Կանադա), Մյունխենը (Գերմանիա), Նյու Դելին (Հնդկաստան), Օսլոն (Նորվեգիա), Ման Պաուլոն (Բրազիլիա):

2006-2007թթ. ընթացքում Երկրի Հրովարտակը ընդունած կազմակերպությունների թիվը հասավ 4600-ի, Երկրի Հրովարտակի ինտերնետային կայքի այցելուների թիվը սկսեց կտրուկ կերպով աճել՝ հասնելով ամսական մոտ 100000-ի: Կրոնական միավորումներում ու գործարար շրջաններում սկսվեց նոր ծրագրերի իրականացում: Երկրի Հրովարտակի Երիտասարդական նախաձեռնությունը շարունակում է համագործակցել ավելի քան 23 երկրներում գործող խմբերի հետ, Երկրի Հրովարտակի մասնաճյուղերի թիվը հասնում է 97-ի՝ ավելի քան 57 երկրներում: Երկրի Հրովարտակը սկսում է զբաղվել այնպիսի նոր խնդիրներով, ինչպիսիք են կլիմայի փոփոխությունը և համախմբված գործողությունների անհրաժեշտությունը: “Երկրի Հրովարտակ” միջազգային կազմակերպությունը հրավիրվել էր մասնակցելու Խաղաղության համար միջմշակութային ու միջկրոնական համագործակցության կոնֆերանսին, որը կազմակերպվել էր ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի նախագահի կողմից:

2007թ. Բրազիլիայի Սան Պաուլո քաղաքի “Ամանա Կեյ” կենտրոնում Օսքար Մոտոմուրայի նախագահությամբ տեղի ունեցած երկարաժամկետ ռազմավարական պլանավորման հարցերով եռօրյա սեմինարի ինտենսիվ աշխատանքի արդյունքում “Երկրի Հրովարտակ” միջազգային կազմակերպության խորհուրդը ներկայացրեց “Ապակենտրոնացված լիազորություն ընդլայնման համար” նոր ռազմավարությունը, որի նպատակն էր նախաձեռնության մեջ ակտիվ մասնակցության զգալի ընդլայնումը, առանց ծավալուն կենտրոնական համակարգման անհրաժեշտության: Լույս տեսավ նոր ”Գործողության ուղեցույցը”՝ որպես Երկրի Հրովարտակի կիրառումը խթանող ապակենտրոնացված գործունեության կարգավորման գործիք:

Երկու տարի շարունակ Երկրի Հրովարտակի նախաձեռնության՝ դեպի երրորդ փուլ անցումը ղեկավարելուց հետո, Ալան Աթֆիսոնը հրաժարվում է ԵՀՄԿ գործադիր տնօրենի պաշտոնից և շարունակում է իր համագործակցությունը “Երկրի Հրովարտակ” միջազգային կազմակերպության հետ իբրև խորհրդատու: Միրիան Վիլելան նշանակվում է “Երկրի Հրովարտակ” միջազգային կազմակերպության նոր գործադիր տնօրեն, իսկ ԵՀՄԿ քարտուղարության գլխավոր գրասենյակը, ինչպես նաև Երկրի Հրովարտակի Կայուն զագացման կրթության կենտրոնը, նորից հաստատվում են Կոստա Ռիկայի Խաղաղության համալսարանում:

2007թ. Էոնա Վիթոելյարը հանձնում է իր համանախագահի պաշտոնը, իսկ Բոենդոն Մքքելը ընտրվում է նոր համանախագահ:

Կարևորելով ապագան՝ Երկրի Հրովարտակը շարունակում է ընդարձակվել իբրև գործունեության սկզբնաղբյուր ու դրդապատճառ, կրթական հենք, միջազգային ոչ պարտադիր իրավունքի փաստաթուղթ, ինչպես նաև մշտապես մեջբերվող փաստաթուղթ՝ զարգացման քաղաքականության, օրենսդրության, միջազգային չափանիշների ու պայմանագրերի ձևավորման ասպարեզում:

Երկրի Հրովարտակի ընդունումը դարձել է մի գործընթաց, որը շեշտադրում է այդ փաստաթղթի գործնական կիրառումը, ներառյալ Հրովարտակի՝ որպես գնահատման հիմք օգտագործումը: Ապակենտրոնացված լիազորումը ճանապարհ է բացում Երկրի Հրովարտակի հետ կապված աշխատանքների արագ տարածման համար ողջ աշխարհով մեկ: Հաշվի առնելով սույն մոտեցումը՝ “Երկրի Հրովարտակ” միջազգային կազմակերպության խորհուրդն իր՝ 2008թ. մայիսյան հանդիպման ժամանակ ընդունում է երկարատև ռազմավարական ծրագիր, ներառելով 6 նպատակային խմբերի ստեղծումը, որոնք պետք է նախաձեռնեին նոր գործունեություն ի սատար Երկրի Հրովարտակի՝ բիզնեսի, կրթության, լրատվության, կրոնական, երիտասարդական շրջանակներում, ՄԱԿ-ում:

“Երկրի Հրովարտակ” միջազգային կազմակերպության թիրախներն ու ռազմավարական ոլորտները

Հետևյալ կետերը ներկայացնում են Երկրի Հրովարտակի նախաձեռնության նպատակները ու ռազմավարական խնդիրները:

Նպատակներ

1. Բարձրացնել Երկրի Հրովարտակի մասին տեղեկատվությունը ողջ աշխարհում ու խթանել իր էթիկական հայեցակարգի ճանաչմանը:

2. Խթանել Երկրի Հրովարտակի ճանաչումը և ընդունումը անհատների, կազմակերպությունների ու ՄԱԿ-ի կողմից:
3. Խթանել Երկրի Հրովարտակի կիրառումն իբրև էթիկական ոլորտում ուղեցույց, ինչպես նաև իր սկզբունքների օգտագործումը քաղաքացիական հասարակության, գործարար շրջանների և իշխանությունների կողմից:
4. Քաջալերել և աջակցել Երկրի Հրովարտակի կրթական կիրառումը դպրոցներում, համալսարաններում, կրոնական ու տեղական համայնքներում և այլ խմբերում:
5. Խթանել Երկրի Հրովարտակի՝ որպես ոչ պարտադիր իրավունքի փաստաթղթի ճանաչումը և օգտագործումը:

Ապակենտրոնացված լիազորության ռազմավարություն

“Ապակենտրոնացված լիազորության բարձրացումը” 2007թ. ընդունված որոշումների և դիրեկտիվների հավաքածուի համառոտ անվանումն է: Ռազմավարության նպատակն է ճանապարհ բացել Երկրի Հրովարտակի նախաձեռնության լայն տարածման համար, առանց ուժեղացնելու կենտրոնական կառավարումը, թույլ տալով մեծաքանակ ինքնակազմակերպվող ջանքերին զարգանալ և աճել:

Ի սատար այս նոր ռազմավարության, ստեղծվել է Երկրի Հրովարտակի նախաձեռնության “Ապակենտրոնացված լիազորման գործողության ուղեցույց”: Հետևելով այս ուղեցույցին՝ ցանկացած անհատ, կազմակերպություն կամ համայնք կարող է օգտվել Երկրի Հրովարտակից ու գործի դնել այն հարմար ուղիներով, սեփական հնարավորություններին և կարողություններին համաձայն:

Թիրախային ոլորտներ - Նպատակային խմբեր

2008 թ. մայիսին կայացած 3-րդ ամենամյա հանդիպման ժամանակ “Երկրի Հրովարտակ” միջազգային կազմակերպության խորհուրդը հավանություն է տվել 6 նպատակային խմբերի ստեղծմանը, որպես նոր երկարատև ծրագրի մի մաս, որը հիմնվում է ապակենտրոնացված լիազորման սկզբունքի վրա ու նախատեսված է ցանցի արագ ձևավորման ու գործունեության խթանման համար հետևյալ բնագավառներից որևէ մեկում՝ գործարար շրջաններ, կրթություն, լրատվություն, կրոնական շրջանակներ, երիտասարդություն, Միացյալ ազգերի կազմակերպություն (ՄԱԿ):

Այս 6 բնագավառները ընտրվել են, քանզի դրանք ունեն առավելագույնս հնարավորություն Երկրի Հրովարտակի ռազմավարական օգտագործման համար՝ կայուն կենսառճիկն անցնելու նպատակով: Այս բնագավառների մեծամասնությունում արդեն իսկ նախաձեռնվում են հուսալի քայլեր և իրականացվում ծրագրեր, որոնք կարող են հիմք հանդիսանալ նպատակային խմբերի հետագա գործունեության համար: Այս բոլոր բնագավառներում առկա է նաև Երկրի Հրովարտակի հանդեպ հետաքրքրություն՝ որը կարող է բնականորեն կամ ինքնաբերաբար ընդլայնվել ու տարածվել՝ նպատակային խմբերի հաջող գործունեության դեպքում:

Ապակենտրոնացված լիազորության ռազմավարության և նպատակային խմբերի ստեղծման հիմքում ընկած է այն գաղափարը, որ Երկրի Հրովարտակի նախաձեռնությունը մի մեծ ցանց է, ոչ թե պաշտոնապես ստեղծված ՀԿ:

Հնարավոր չէ տարածել Երկրի Հրովարտակի նախաձեռնության ազդեցությունն ամբողջ աշխարհով մեկ և իրագործել դրա առաքելությունը, եթե ԵՀՄԿ-ն ընկալվի որպես սովորական

կազմակերպություն, որտեղ գործունեությունը ղեկավարվում է մեկ կառույցի՝ ԵՀՄԿ քարտուղարության կողմից: Հաշվի առնելով Երկրի Հրովարտակի առաքելությունը, անհնարին կլինեք որևէ մեկ ՀԿ-ի համար ղեկավարել և հսկել Երկրի Հրովարտակի նախաձեռնության գլոբալ գործունեությունը, այդ հսկա նախաձեռնության արժեքն ու կառավարումը: Դա կլինեք անհնարին առաջադրանք և ոչ խելամիտ ծրագիր:

Իրականում Երկրի Հրովարտակի նախաձեռնությունը ձևավորվել է որպես հազարավոր անհատների ու կազմակերպությունների ցանց, որոնք երբեմն համագործակցում են, իսկ հաճախ էլ գործում են անկախ հիմունքներով: ԵՀՄԿ Խորհուրդը քաղաքականությունը ու ռազմավարությունն է սահմանում ԵՀՄԿ քարտուղարության համար, այս քաղաքականությունն ու ռազմավարությունը որոշ ուղղություններ են տալիս ավելի լայն ցանցին՝ ձևավորելով Երկրի Հրովարտակի նախաձեռնությունը:

Յուրաքանչյուր նպատակային խմբի առաջնորդների թիմը բաղկացած է լինելու մոտավորապես 2-10 անդամներից: Յուրաքանչյուր նպատակային խմբի հիմնական նպատակն է՝ խթանել Երկրի Հրովարտակի գործունեությունը ու նպաստել Երկրի Հրովարտակի ցանցի ընդլայնմանը: Յուրաքանչյուր նպատակային խումբ սկսելու է իր աշխատանքը՝ հստակեցնելով այն աջակցությունը, որը կարող է տրամադրել Երկրի Հրովարտակը տվյալ ոլորտում և այն բնագավառը, որն նա կարող է համապատասխանորեն զբաղեցնել: Անհրաժեշտ կլինի նաև այդ նպատակներին հասնելու համար մշակել գործունեության ծրագիր՝ կարճաժամկետ և երկարաժամկետ նպատակներով ու ռազմավարությամբ: Այնուհետ նպատակային խումբը պետք է ապահովի կամավոր առաջնորդություն և այնպիսի աջակցություն, որն պահանջվում է ընդունած ծրագրերը իրականացնելու և դրանց համար անհրաժեշտ ռեսուրսները հայտնախոյտելու համար: Յուրաքանչյուր նպատակային խումբ դառնալու է Երկրի Հրովարտակի ղեկավարների և ակտիվիստների սեփական ցանց:

Որպես նոր երկարաժամկետ ծրագրի մի մաս՝ ԵՀՄԿ խորհուրդը հավանություն տվեց ևս 2 այլ ծրագրերի, որոնք ներառում են Երկրի Հրավարտակի նախաձեռնության համաշխարհային ցանցի և վեբ-կայքի ընթացիկ բարելավում, հաղորդակցության նյութերի, այդ թվում, գրքերի, բրոշուրների, ֆիլմերի պատրաստում, ինչն անհրաժեշտ է նախաձեռնության տարածման համար այն բնագավառներում, որոնց վրա էլ հենց կենտրոնացված են նպատակային խմբերը: Համաշխարհային վեբ-ցանցային պլատֆորմը ենթադրում է տեղական ցանցի ստեղծում յուրանչյուր երկրում՝ համապատասխան լեզվով կամ լեզուներով: Այս տեղական կայքերը կապահովվեն Երկրի Հրովարտակի նախաձեռնության մասին միևնույն հիմնական տեղեկատվությամբ, կարող են հետագայում համապատասխանեցվել տեղական համատեքստին: Քարտուղարությունը աջակցելու է այս 2 ծրագրերին, այդ թվում տեղադրելով Երկրի Հրավարտակի կայքում պարբերական հաշվետվություններ այդ ծրագրերի առաջընթացի վերաբերյալ նպատակային խմբերի գործունեության մասին: Այն անհատները, ովքեր ցանկանում են սատարել Երկրի Հրովարտակին, կարող են անհապաղ կապվել առաջնորդների որևէ խմբի հետ:

Երկրի Հրովարտակի նախաձեռնության ապակենտրոնացված տարածման գործողության ուղեցույց

Ներածական

ԵՀՄԿ-ն խրախուսում է յուրաքանչյուրին աջակցել Երկրի Հրովարտակի նախաձեռնության նպատակներին: Մենք Ձեր ակտիվ մասնակցության սատարման կարիքն ենք զգում: Այս առումով, ԵՀՄԿ-ն գտնվում է նախաձեռնության տարածման գործընթացում՝ խթանելով անհատների, համայնքների և կազմակերպությունների ապակենտրոնացված ակտիվությունը և լիազորությունները:

Մտանձնելով այս նոր նախաձեռնությունը՝ ԵՀՄԿ-ն կշարունակի խթանել Երկրի Հրովարտակի տարածումը՝ զանազան պաշտոնական միջազգային գործընթացների ու սահմանափակ քանակությամբ ծրագրերի միջոցով: Այնուամենայնիվ, այս նոր ռազմավարությունը անհրաժեշտ է, քանի որ Երկրի Հրովարտակի քարտուղարությունը կարող է կազմակերպել և վարել Երկրի Հրովարտակի հայեցակարգի կիրառման մեծաքանակ գործողությունների միայն մի փոքր մասը:

Մտորն ներկայացված Գործողության ուղեցույցը միջոց է, որը մշակվել է ի օգնություն բազմաթիվ մարդկանց՝ վարելու Երկրի Հրովարտակի հետ կապված գործունեությունն այն ճանապարհներով, որոնք համահունչ են Երկրի Հրովարտակի արժեքներին ու սկզբունքներին:

Գործողության ուղեցույցի նպատակն է հաստատել կայունության մի հստակ չափանիշ այն հարցում, թե ինչպես են Երկրի Հրովարտակի անունից իրականացվում ապակենտրոնացված գործողությունները:

Գործողության ուղեցույցն ուղղված է առաջին հերթին անհատներին: Երկրի Հրովարտակի մեծ մասի սկզբունքների ամբողջական կիրառումը պահանջում է որոշ քայլեր իշխանությունների, կորպորացիաների և այլ կազմակերպությունների կողմից: Այնուամենայնիվ, անհատների համախոհությունը ավելի լավ աշխարհի կառուցման հնարավորության առաջնորդության գերագույն աղբյուրն է: Բոլոր սեկտորներում կարևորվում են համայն մարդկության ներդրումը:

Գործողության ուղեցույցը հաստատված ու վերջնական չէ: Երկրի Հրովարտակ՝ միջազգային կազմակերպության խորհուրդը պարբերաբար վերանայելու է այն՝ հաշվի առնելով այն փորձառություններն ու առաջարկությունները, որոնք կստացվեն են Երկրի Հրովարտակի կիրառման վերաբերյալ տարբեր տարածաշրջաններից: Խորհուրդը պատրաստ է ընդունել Ձեր ցանկացած առաջարկությունը:

ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՔ ԴՈՒՔ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԵՐԿՐԻ ՀՐՈՎԱՐՏԱԿԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆԸ

Դուք կարող եք.

1. Տարածել Երկրի Հրովարտակի վերաբերյալ տեղեկությունները Ձեր ըկերների շրջանակներում և տեղական համայնքներում:
2. Հավանության արժանացրել Երկրի Հրովարտակը և քաջալերեք այն կազմակերպություններին, որոնց պատկանում էք, և Ձեր տեղական համայնքներին, որպեսզի օգտագործեն և ընդունեն Երկրի Հրովարտակը:
3. Մտեղծել Երկրի Հրովարտակն ուսումնասիրող խումբ և հետազոտեք, թե ինչպես կարելի է օգտագործել Երկրի Հրովարտակը և կիրառել վերջինիս սկզբունքները Ձեր տանը, աշխատավայրում և տեղական համայնքներում:

4. Միանալ Երկրի Հրովարտակի նախաձեռնության 6 թիրախային բնագավառներում (կրթություն, գործարար շրջաններ, լրատվություն, կրոնական շրջանակներ, երիտասարդություն և ՄԱԿ) գործող ոպատակային խմբերից մեկի աշխատանքներին:

5. Համագործակցել Երկրի Հրովարտակի գործընկերների և մասնաճյուղերի այլ կազմակերպությունների հետ, որոնք ընդունել են Երկրի Հրովարտակը ձեր տարածաշրջանում:

6. Կատարել դրամական ներդրումներ կամ տրամադրել այլ անհրաժեշտ ծառայություններ՝ սատարելով “Երկրի Հրովարտակ” միջազգային կազմակերպությանը և Երկրի Հրովարտակի այլ ծրագրերին:

7. Խորհրդակցել և հետևել Երկրի Հրովարտակի ապակենտրոնացված տարածման Գործունեության ուղեցույցին, որը հասանելի է Երկրի Հրովարտակի վեբ-կայքում:

Դպրոցներում, գործարար շրջաններում, կառավարությունում, ՀԿ-ներում և համաժողովներում Երկրի Հրովարտակի կիրառման բազմաթիվ ճանապարհներ կան: Օրինակ, այն կարելի է օգտագործել, որպես՝

- կրթական միջոց, որը կօգնի հասկանալ մարդկությանը սպառնացող մարտահրավերները և հնարավոր այլընտրանքները, ինչպես նաև կայուն կենսառճը.
- գործելու կոչ և բարոյական ուղեցույց դեպի կայուն կենսառճ, որը կարող է առաջ բերել համախոհություն, համագործակցություն և փոփոխություն.
- արժեքների մի համակարգ, որը կուղեկցի բոլոր մակարդակների իշխանություններին արդար, կայուն և խաղաղ աշխարհ կառուցելու նպատակով քաղաքականության և ռազմավարության ձևավորման հարցում.
- բազմակողմանի շրջանակներ՝ կորպորատիվ, հասարակական և էկոլոգիական պատասխանատվության, ինչպես նաև համապատասխան հայտարարությունների և մասնագիտական վարքականների ձևավորման համար.
- խթան՝ ընդհանուր նպատակների, արժեքների և գլոբալ էթիկայի հարցերի շուրջ բազմասեկտորային, միջմշակութային և միջկրոնական երկխոսության համար.
- ոչ պարտադիր իրավունքի փաստափուլ, որը բարոյական հիմք է հանդիսանում շրջակա միջավայրի և կայուն զարգացմանը վերաբերվող օրենքի մշակման համար.
- կայունության նպատակին ուղղված առաջընթացի գնահատման գործիք:

Ե Ե Ե

ԵՐԿՐԻ ՀՐՈՎԱՐՏԱԿԸ

/պաշտոնական տեքստ/

ՆԵՐԱԾԱԿԱՆ

Մենք գտնվում ենք Երկրի պատմության ճգնաժամային փուլում, երբ մարդկությունը պետք է ընտրի իր ապագան: Քանի որ աշխարհը դառնում է ավելի ու ավելի փոխադրված և փխրուն, ապագան ուրվագծվում է միաժամանակ և՛ մեծ վտանգով, և՛ մեծ հեռանկարներով լի: Առաջընթացի համար մենք պետք է գիտակցենք, որ մշակույթների ու ապրելակերպի հոյակապ բազմազանության հետ մեկտեղ – մենք միասնական Երկրի ընդհանուր ճակատագիր ունեցող միասնական մարդկային ընտանիք և համակեցություն ենք: Մենք պետք է միավորվենք, որպեսզի ստեղծենք բնության ու մարդու համընդհանուր իրավունքների նկատմամբ հարգանքի, տնտեսական արդարության և խաղաղության մշակույթի վրա հիմնված կայուն գլոբալ համակեցություն: Այս ձգտման մեջ հատկապես կարևոր է այն, որ մենք, երկրաբնակներս, հայտարարում ենք մեկս մյուսի, ամենայն շնչավորի մեծ համակեցության և ապագա սերունդների հանդեպ մեր պատասխանատվությունը:

Երկիրը, մեր տունը

Մարդկությունը անընդհատ զարգացող ընդարձակ Տիեզերքի մասն է: Երկիրը, մեր տունը, ապրում և իր վրա կրում է կյանքի բացառիկ ընդհանրություն: Բնության ուժերը ապրելը դարձնում են վտանգավոր ու անապահով, սակայն Երկիրը ստեղծում է կյանքի հարատև զարգացման համար անհրաժեշտ բնական պայմաններ: Ամենայն շնչավորի համակեցության կայունությունն ու մարդկության բարեկեցությունը կախված են առողջ կենսոլորտի պահպանումից՝ իր ողջ էկոհամակարգերով, բույսերի ու կենդանիների հարուստ բազմազանությամբ, բերրի բնահողով, մաքուր ջրով ու օդով: Գլոբալ շրջակա միջավայրը իր սահմանափակ պաշարներով բոլոր մարդկանց ընդհանուր հոգածության առարկան է: Երկրի կենսունակության, բազմազանության և գեղեցկության պահպանումը սրբազան պարտք է:

Գլոբալ իրավիճակը

Արտադրության և սպառման գերիշխող մոդելները առաջ են բերում շրջակա միջավայրի ամայացում, պաշարների սպառում ու տեսակների մասսայական բնաջնջում: Համակեցությունները քայքայվում են: Զարգացման հետևանքով առաջացող եկամուտը բաշխվում է անարդարացի և խզումը հարուստների ու աղքատների միջև աճում է: Լայնորեն տարածված են ու մեծ տառապանք են պատճառում անարդարությունը, աղքատությունը և զինված ընդհարումները: Բնակչության աննախադեպ աճը առաջ է բերել սոցիալական ու տնտեսական համակարգերի գերբեռնվածություն: Գլոբալ անվտանգության հիմունքները վտանգված են: Այդ միտումները վտանգավոր են, բայց անխուսափելի չեն:

Ապագայի մարտահրավերները

Մենք կանգնած ենք երկրնորանքի առջև - Երկրի ու միմյանց մասին հոգալու նպատակով ձևավորել գլոբալ համագործակցություն կամ ենթարկվել ինքնակործանման և կյանքի բազմազանության ոչնչացման վտանգի: Մեր արժեքների համակարգում, սահմանակարգերում ու ապրելակերպում անհրաժեշտ են արմատական փոփոխություններ: Մենք պետք է գիտակցենք, որ հիմնական կարիքները բավարարելու հետ մեկտեղ մարդկության

զարգացումը առաջին հերթին ենթադրում է գոյատևել ավելի երկար, այլ ոչ թե ունենալ ավելի շատ: Բոլոր մարդկանց կարիքները հոգալու և շրջակա միջավայրի վրա մեր ներգործությունը նվազեցնելու համար մենք ունենք բավարար չափով գիտելիքներ ու տեխնոլոգիաներ: Ժողովրդավարական ու մարդասեր աշխարհ կառուցելու համար գլոբալ քաղաքացիական հասարակությունը պետք է ստեղծի նոր հնարավորություններ: Մեր էկոլոգիական, սոցիալական, քաղաքական, սոցիալական ու հոգևոր հիմնախնդիրները փոխադարձ շաղկապված են և միասին մենք կկարողանանք մշակել ամբողջական լուծումներ:

Համընդհանուր պատասխանատվություն

Վերոհիշյալ ձգտումները իրագործելու համար մենք պետք է համընդհանուր պատասխանատվության զգացումով ապրելու որոշում կայացնենք, մեզ համարելով ինչպես համաշխարհային համակեցության, այնպես էլ տեղական համայնքների մասնիկը: Մենք քաղաքացիներն ենք միաժամանակ տարբեր ազգերի և միասնական աշխարհի, որտեղ տեղայինը և գլոբալը փոխադարձ շաղկապված են: Յուրաքանչյուրը պատասխանատվություն է կրում մարդկային ցեղի և ավելի ընդարձակ կենսունակ աշխարհի ներկա ու ապագա բարօրության համար: Ամենայն շնչավորի հետ մարդկային համերաշխության ու ազգակցության ոգին կամրապնդվի, եթե մենք ապրենք գոյության հրաշքի նը-կատմամբ խանդաղատանքի, մեզ պարզևած կյանքի համար շնորհակալության զգացումով և բնության մեջ մարդու զբաղեցրած տեղին համապատասխան համեստությամբ: Մեզ ծայր աստիճան անհրաժեշտ է հիմնական արժեքների վերաբարյալ ձևավորվող համաշխարհային համակեցության համար բարոյական հիմք ապահովող տեսակետ ունենալ: Այդ պատճառով, հույսով միաբանված, մենք սահմանում ենք կայուն ապրելակերպի փոխադարձ հետևյալ սկզբունքները՝ իբրև ընդհանուր ստանդարտներ, որոնցով պետք է ղեկավարվի և գնահատվի բոլոր անհատների, կազմակերպությունների, գործարար շրջանակների, կառավարությունների և տրանսազգային սահմանակարգերի գործելակերպը:

ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

1. ՀԱՐԳԵԼ ԵՎ ՀՈԳԱԼ ԱՄԵՆԱՅՆ ՇՆՉԱՎՈՐԻ ՀԱՄԱԿԵՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Հարգել Երկիրը և կյանքը իր ողջ բազմազանությամբ:

- ա. Ընդունել, որ ամենայն գոյաձևը փոխադարձապես է և կյանքի յուրաքանչյուր դրսևորում արժեքավոր է՝ անկախ մարդու համար նրա կարևորությունից:
- բ. Հաստատել հավատ յուրաքանչյուր անհատի անժխտելի արժանապատվության և մարդկության մտավոր, գեղարվեստական, բարոյական ու հոգևոր ներուժի նկատմամբ:

2. Ընթրումով, կարեքցանքով և սիրով հոգալ ամենայն շնչավորի համակեցության մասին:

- ա. Ընդունել, որ բնական պաշարներին տիրելու, կառավարելու և օգտագործելու իրավունքի հետ միասին առաջանում է շրջակա միջավայրին հասցվելիք վնասը կանխարգելելու և մարդկանց իրավունքները պաշտպանելու պարտավորություն:

բ. Սահմանել, որ ազատության, ուժի և գիտելիքների աճին զուգընթաց պետք է աճի համընդհանուր բարեկեցությանը աջակցելու պատասխանատվությունը:

3. *Կառուցել արդարացի, սոցիալապես միասնացված, կայուն և խաղաղ ժողովրդավարական հասարակություններ:*

ա. Ապահովել համայնքների կողմից բոլոր մակարդակներում մարդու իրավունքների ու հիմնական ազատությունների երաշխավորումը և յուրաքանչյուրին իր ներուժը լիովին իրացնելու հնարավորության ընձեռնումը:

բ. Էկոլոգիական պատասխանատվությունը պահպանելով հանդերձ, օժանդակել բոլորին գոյատևելու հուսալի և նշանակալի միջոցների հասնելու հնարավորություն ընձեռնող սոցիալական ու տնտեսական արդարությանը:

4. *Ներկա և ապագա սերունդների համար պահպանել Երկրի առատաբերությունն ու գեղեցկությունը:*

ա. Ընդունել, որ յուրաքանչյուր սերնդի գործողությունների ազատությունը որոշվում է ապագա սերունդների պահանջմունքներով:

բ. պագա սերունդներին փոխանցել Երկրի մարդկային ու էկոլոգիական համակեցությունների ծաղկումը երկարաժամկետ հեռանկարով ապահովող արժեքներ, ավանդույթներ և սահմանա-կարգեր:

Այս չորս հիմնական պարտավորությունների իրականացման համար անհրաժեշտ է.

II. ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՍԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

5. *Պահպանել և վերականգնել Երկրի էկոլոգիական համակարգերի ամբողջականությունը, հատուկ ուշադրություն դարձնելով կյանքի կայունությունը ապահովող կենսաբանական բազմազանությանն ու բնական գործընթացներին:*

ա. Բոլոր մակարդակներում յուրացնել կայուն զարգացման պլաններն ու նորմերը, որոնց համաձայն շրջակա միջավայրի պահպանումը և վերականգնումը ամբողջականացվում է զարգացման բոլոր նախաձեռնությունների հետ:

բ. Երկրի կենսապահովման համակարգերի պաշտպանության, կենսաբազմազանությանը օժանդակելու և բնության ժառանգության պահպանման համար ստեղծել ու պաշտպանել կենսունակ բնական և կենսոլորտային արգելանոցներ, ներառյալ անարատ հողերը և ջրային տարածք-ները:

գ. Աջակցել վտանգի ենթարկված տեսակների և էկոհամակարգերի վերականգնմանը:

դ. Հսկել և ոչնչացնել բնական տեսակների ու շրջակա միջավայրի համար վնասակար օտարածին կամ գենետիկորեն ձևափոխված օրգանիզմները, ինչպես նաև կանխել նման վտանգավոր օրգանիզմների ներմուծումը:

ե. Ղեկավարել վերականգնվող պաշարների՝ ջրի, բնահողի, անտառային մթերքի, ծովային կենդանիների օգտագործումը այնպես, որ չզերազանցվեն նրանց վերականգնման արագությունները և ապահովված լինի էկոհամակարգերի պաշտպանությունը:

զ. Ղեկավարել չվերականգնվող պաշարների՝ օգտակար հանածոների և հեղուկ վառելիանյութի հանույթն ու օգտագործումը առանց շրջակա միջավայրին լուրջ վնաս պատճառելու և նվազագույնի հասցնելով նրանց սպառումը:

6. Իբրև էկոլոգիական պաշտպանության լավագույն միջոց գործածել շրջակա միջավայրին սպառ-նացող վնասի կանխարգելում և սահմանափակ գիտելիքների կամ անբավարար տեղեկությունների դեպքում լինել շրջահայաց:

ա. Միջոցներ ձեռնարկել շրջակա միջավայրին սպառնացող լուրջ կամ անդառնալի վնասը կանխելու համար մինչև անգամ այն դեպքերում, երբ գիտելիքները թերի ու անավարտ են:

բ. Որևէ գործունեություն առաջարկողին պարտավորեցնել ներկայացնելու ապացույցներ լուրջ վնասի բացակայության վերաբերյալ և նախաձեռնող կողմին համարել պատասխանատու շրջակա միջավայրին վնաս հասցնելու դեպքում:

գ. Ապահովել, որ որոշումներ կայացնելիս հաշվի առնվեն մարդկային գործունեության կուտակվող, երկարաժամկետ, միջնորդավորված, հեռավոր և գլոբալ հետևանքները:

դ. Կանխել շրջակա միջավայրի յուրաքանչյուր հատվածի աղտոտումը և թույլ չտալ ռադիոակտիվ, թունավոր կամ այլ վնասակար նյութերի կուտակումը:

ե. Խուսափել շրջակա միջավայրին վնաս հասցնող ռազմական գործողություններից:

7. Յուրացնել արտադրության, սպառման և վերարտադրության այնպիսի կառուցվածքներ, որոնք երաշխավորում են Երկրի վերականգնողական հնարավորությունների պահպանություն և մարդու իրավունքների պաշտպանություն և հասարակության բարեկեցություն:

ա. Նվազագույնի հասցնել, վերամշակել և վերաօգտագործել արտադրության ու սպառման համակարգերում օգտագործված նյութերը, ապահովելով էկոհամակարգերի կողմից թափոնների յուրացման հնարավորություն:

բ. Խնայողաբար և արդյունավետ օգտագործել էլեկտրաէներգիան, ավելի ու ավելի ընդլայնելով էներգիայի այնպիսի վերականգնվող աղբյուրների օգտագործումը, ինչպիսիք են արևը և քամին:

գ. Օժանդակել էկոլոգիապես ընդունելի տեխնոլոգիաների զարգացմանը, ներդրմանը և արդա-բացի փոխանցմանը:

դ. Ապրանքների ու ծառայությունների էկոլոգիական և սոցիալական ամբողջական արժեքը ար-տահայտել վաճառքի գների մեջ և սպառողի համար հնարավորություն ստեղծել արտադրանքը համեմատելու սոցիալական ու էկոլոգիական բարձրագույն ստանդարտների հետ:

ե. Երաշխավորել վերարտադրողական առողջություն և կարգավորվող վերարտադրություն ապահովող առողջապահության ծառայություններից օգտվելու համընդհանուր հնարավորություն:

զ. Յուրացնել սահմանափակումներ ունեցող աշխարհում կյանքի որակին և նյութական բարեկե-ցությանը առանձնահատուկ նշանակություն տվող ապրելակերպ:

8. *Ձարգացնել էկոլոգիական կայունության ուսումնասիրությունը և օժանդակել ձեռք բերված գիտելիքների անվերապահ փոխանակմանն ու լայն կիրառմանը:*

- ա. Կայունության ոլորտում աջակցել միջազգային գիտական և տեխնիկական համագործակցությանը, հատուկ նշանակություն տալով զարգացող երկրների կարիքներին:
- բ. Ընդունել և պահպանել բոլոր մշակույթների մեջ շրջակա միջավայրի պաշտպանության ու մարդկության բարեկեցության համար օգտակար ավանդական գիտելիքները և հոգևոր իմաստությունը:
- գ. Մարդու առողջության և շրջակա միջավայրի պաշտպանության համար կենսական կարևորություն ունեցող, այդ թվում և ժառանգականության հարցերին վերաբերվող տեղեկությունը դարձնել համընդհանուր սեփականություն:

III. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ և ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ

9. *Արմատախիլ անել աղքատությունը, համարելով այն բարոյական, սոցիալական և էկոլոգիական հրամայական պահանջ:*

- ա. Երաշխավորել խմելու ջուր, մաքուր օդ, անվտանգ սնունդ, չաղտոտված բնահող, բնակարան և անվտանգ սանիտարական պայմաններ ունենալու մարդու իրավունքները, առանձնացնելով անհրաժեշտ ազգային և միջազգային միջոցներ:
- բ. Երաշխավորել բոլոր մարդկանց կրթահամակարգից ու պաշարներից օգտվելու հնարավորություն, որը անհրաժեշտ է գոյատևման կայուն միջոցներ ապահովելու համար, իսկ նրանց համար, ովքեր ի վիճակի չեն ինքնաապահովման, նախատեսել սոցիալական պաշտպանություն և անվտանգության համակարգեր:
- գ. Ընդունել թշվառներին, պաշտպանել խոցելիներին, օգնել տառապյալներին, նրանց համար ստեղծել իրենց ունակությունները զարգացնելու և ձգտումներին հետևելու հնարավորություններ:

10. *Երաշխավորել տնտեսական գործունեության և սահմանակարգերի կողմից աջակցություն մարդկային զարգացմանը բոլոր մակարդակներում արդարացի ու կայուն կերպով:*

- ա. Օժանդակել բարիքների ներազգային և միջազգային արդարացի բաշխմանը:
- բ. Ջորեղացնել զարգացող ժողովուրդների մտավոր, ֆինանսական, տեխնիկական ու սոցիալական պաշարները և ազատել նրանց միջազգային ծանր պարտքերից:
- գ. Երաշխավորել առևտրի օժանդակությունը պաշարների կայուն օգտագործմանը, շրջակա միջավայրի պաշտպանությանը և առաջավոր աշխատանքային ստանդարտներին:
- դ. Տրանսազգային կորպորացիաներից և միջազգային ֆինանսական կազմակերպություններից պահանջել գործունեության «թափանցիկություն» ի շահ

հասարակության, համարելով նրանց պատասխանատու իրենց կողմից կատարվող գործողությունների հետևանքների համար:

11. *Իբրև կայուն զարգացման նախադրյալ սահմանել սեռերի իրավահավասարություն և փոխհա-րաբերությունների արդարություն ու ապահովել կրթահամակարգից, առողջապահությունից և տնտեսական միջոցներից օգտվելու համընդհանուր հնարավորություն:*

ա. Ապահովել կանանց ու աղջիկների իրավունքները և վերջ տալ նրանց նկատմամբ ամեն տե-սակ բռնության:

բ. Աջակցել տնտեսական, քաղաքական, քաղաքացիական, սոցիալական ու մշակութային կյանքի բոլոր ոլորտներում կանանց ակտիվ մասնակցությանը իբրև լիիրավ գործընկերներ, որոշում կայացնելու ունակ անձիք, առաջնորդներ և շահառուներ:

գ. Ամրապնդել ընտանիքները և ընտանիքի բոլոր անդամների համար ապահովել անվտանգու-թյուն ու դաստիարակություն սիրո մթնոլորտում:

12. *Առանց խտրականության պաշտպանել բոլոր մարդկանց արժանապատվությունը, մարմնական առողջությունը և հոգևոր բարօրությունը ապահովող բնական ու սոցիալական միջավայր ունենալու իրավունքները, հատուկ ուշադրություն դարձնելով հիմնաբնականների ու փոքրամասնությունների իրավունքներին:*

ա. Բացառել խտրականությունը իր բոլոր դրսևորումներով, ինչպիսիք են խտրականությունը ըստ մաշկի գույնի, սեռազգայական կողմնորոշման, ռասայական, սեռական, կրոնական, լեզվային, ազգային, էթնիկական կամ սոցիալական հատկանիշների:

բ. Հաստատել հիմնաբնակ ժողովուրդների սեփական հոգևոր ակունքներ, գիտելիքներ, հողեր, պաշարներ և կենսագործունեության ավանդապես կայուն մոդելներ ունենալու իրավունքները:

գ. Հարգել ու աջակցել մեր համակեցությունների երիտասարդ մարդկանց, նրանց հնարավորություն տալով էական դեր խաղալու կայուն հասարակությունների ձևավորման գործում:

դ. Պահպանել և վերականգնել մշակութային ու հոգևոր տեսակետից հատուկ նշանակություն ունեցող վայրերը:

IV. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ, ՀՐԱԺԱՐՈՒՄ ԲՈՆՈՒԹՅՈՒՆԻՑ և ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ

13. *Բոլոր մակարդակներում ամրապնդել ժողովրդավարական սահմանակարգերը, ապահովել կառավարման հաշվետվություն ու «թափանցելիություն», ինչպես նաև մասնակցություն որոշումների կայացմանը և արդարադատության մատչելիություն:*

ա. Պաշտպանել յուրաքանչյուր մարդու իրավունքը ժամանակին ու հստակ տեղեկություն ստանալու շրջակա միջավայրի հարցերի և բոլոր պլանների ու գործունեության վերաբերյալ, որոնք կարող են վերաբերվել նրան կամ շոշափել նրա շահերը:

- բ. Աջակցել տեղական, տարածքային և գլոբալ քաղաքացիական հասարակությանը, օժանդակել բոլոր շահագրգռված անձանց ու կազմակերպությունների լիարժեք մասնակցությանը որոշումներ կայացնելու գործընթացին:
- գ. Պաշտպանել կարծիքների ազատության, արտահայտությունների, խաղաղ հավաքների, միությունների և տարահայացքության իրավունքները:
- դ. Սահմանել վարչական և անկախ դատական ընթացակարգերի հետ առնչության արդյունավետ ու գործուն հնարավորություն, ներառյալ շրջակա միջավայրին հասցված վնասի և այդպիսի վտանգի համար հատուցումն ու բավարարությունը:
- ե. Պետական և մասնավոր բոլոր կառույցներում արմատախիլ անել կաշառակերությունը:
- զ. Ամրապնդել տեղական համակեցությունները, նրանց հնարավորություն տալով հոգալու իրենց շրջակա միջավայրի մասին և սահմանել շրջակա միջավայրի պահպանության պարտականություններ դրանց առավել արդյունավետ իրագործումը ապահովող ղեկավարման մակար-դակներում:

14. Պաշտոնական կրթահամակարգի և հարատև ուսուցման մեջ ներգրավել կայուն ապրելակերպի համար անհրաժեշտ գիտելիքներ, արժեքներ և փորձ:

- ա. Բոլորին, հատկապես երեխաներին և երիտասարդությանը ապահովել կրթություն ստանալու հնարավորությամբ, որը նրանց թույլ կտա ակտիվորեն աջակցել կայուն զարգացմանը:
- բ. Խթանել կայունության ոլորտում կրթության մեջ արվեստի, գրականության, ինչպես նաև գիտության ներդրումը:
- գ. Ուժեղացնել մասսայական տեղեկատվական միջոցների դերը էկոլոգիական և սոցիալական հիմնախնդիրների մասին իրազեկությունը ընդլայնելու հարցում:
- դ. Գիտակցել կայուն ապրելակերպի համար բարոյական և հոգևոր կրթության կարևորությունը:

15. Ամենայն շնչավորին վերաբերվել հարգանքով և կարեքցանքով:

- ա. Բացառել դաժանությունը մարդկային հասարակության մեջ պահվող կենդանիների նկատմամբ և պաշտպանել նրանց տառապանքից:
- բ. Պահպանել վայրի կենդանիներին ուժեղ, երկարատև կամ վերացվող տառապանք պատճառող որսի, թակարդով բռնելու կամ ձկնորսության եղանակներից:
- գ. Առավելագույնս խուսափել կամ բացառել այն տեսակների անհատների որսը կամ կորուստը, որոնք չէին հանդիսանում կատարվող գործունեության նպատակը:

16. Ձևավորել հանդուրժողականության, բռնությունը բացառող և խաղաղության մշակույթ:

- ա. Աջակցել ու խրախուսել բոլոր մարդկանց միջև, ներազգային և ազգամիջյան փոխըմբռնումը, համերաշխությունն ու համագործակցությունը:

- բ. Կիրառել անողորմ ընդհարումները կանխող համապարփակ ռազմավարություններ, իսկ էկոլոգիական տարածայնությունների ու այլ վեճերի կարգավորման և լուծման համար՝ համագործակցության եղանակներ:
- գ. Ազգային անվտանգության համակարգերը ապառազմականացնել մինչև պրովոկացիայի հնարավորությունը բացառող մակարդակը և ռազմական միջոցները վերակողմնորոշել դեպի խաղաղ նպատակները, այդ թվում նաև դեպի էկոլոգիական վերականգնում:
- դ. Վերացնել միջուկային, կենսաբանական, քիմիական և մասսայական ոչնչացման զենքի այլ տեսակները:
- ե. Ուղեծրային ու կոսմիկական տարածությունը օգտագործելիս ապահովել շրջակա միջավայրի պաշտպանությունը և խաղաղությունը:
- զ. Գիտակցել, որ խաղաղությունը ամբողջականություն է, ստեղծված արդարացի վերաբերմունքով ինքդ քո, այլ մարդկանց, այլ մշակույթների ու կյանքի, Երկրի և մի հսկայական միասնության նկատմամբ, որի մասնիկը մենք հանդիսանում ենք,:

ԱՌԱՋԸՆԹԱՑ

Ընդհանուր ճակատագիրը, ինչպես երբեք պատմական անցյալում, մեզ կոչ է անում որոնել նոր սկիզբ: Նման բարեփոխում խոստանում են Երկրի Հրովարտակի սկզբունքները: Այդ հեռանկարին հասնելու համար մենք պետք է պարտավորվենք կիրառել Երկրի Հրովարտակի արժեքներն ու գաղափարները և սատարել նրանց:

Դա պահանջում է հոգու և մտածելակերպի փոփոխություններ: Դա պահանջում է գլոբալ փոխադրվածության և համընդհանուր պատասխանատվության նորովի գիտակցում: Տեղական, ազգային, տարածաշրջանային և գլոբալ մակարդակներում մենք պետք է ստեղծագործաբար զարգացնենք ու կիրառենք կայուն ապրելակերպի հայացակարգը: Մեր մշակութային բազմազանությունը անգնահատելի ժառանգություն է, և տարբեր մշակույթները կգտնեն այդ աշխարհայացքի իրացման իրենց ուրույն ուղիները: Մենք պետք է խորացնենք և ընդլայնենք Երկրի Հրովարտակի կողմից նախաձեռնվող գլոբալ երկխոսությունը, քանի որ դեռևս շատ բան ունենք սովորելու ճշմարտության ու իմաստության համատեղ որոնումների ընթացքում:

Հաճախ կարևոր արժեքների միջև ծագում է լարվածություն: Դա կարող է բարդացնել ընտրությունը: Այնուամենայնիվ մենք պետք է ուղիներ գտնենք ներդաշնակելու բազմազանությունը եզակիության հետ, ազատության օգտագործումը հասարակական բարօրության հետ, կարճաժամկետ խնդիրները երկարաժամկետ նպատակների հետ: Յուրաքանչյուր անհատ, ընտանիք, կազմակերպություն և համայնք պետք է կենսականորեն կարևոր դեր խաղա: Արվեստը, գիտությունը, կրոնը, կրթահամակարգերը, մասսայական հաղորդագրության միջոցները, գործարար շրջանները, ոչ կառավարական կազմակերպությունները և կառավարությունները – սրանք բոլորը կոչված են առաջարկելու ստեղծարար ղեկավարում: Կառավարության, քաղաքացիական հասարակության և գործարար շրջանների համագործակցությունը էական է արդյունավետ ղեկավարման համար:

Կայուն համաշխարհային համակեցություն կառուցելու նպատակով աշխարհի ազգերը պետք է վերահաստատեն իրենց պարտավորությունները ՄԱԿ-ի հանդեպ, կատարեն իրենց

պարտավորությունները գոյություն ունեցող միջազգային համաձայնագրերի սահմաններում և սատարեն Երկրի Հրո-վարտակի սկզբունքների իրագործմանը շրջակա միջավայրի ու զարգացման ոլորտում պարտադիր միջազգային իրավական մեխանիզմների միջոցով:

Թող մերը լինի այն ժամանակը, որը կհիշվի իբրև կյանքի նկատմամբ հարգանքի վերականգնման, կայունության հասնելու վճռականության, հանուն արդարության ու խաղաղության պայքարի խթանման և կյանքի ցնծալի հաղթանակի ժամանակաշրջան:

Ե Ե Ե

Երկրի Հրովարտակը երեխաների համար

Գիտե՞ս արդյոք՝ թե ինչ է նշանակում «Հրովարտակ» բառը Դա հանդիսավոր կոչ է՝ հռչակագիր՝ համընդհանուր համաձայնեցում՝ պայմանագիր է

Ի՞նչ ենք մենք հռչակում Երկրի հրովարտակում և ի՞նչ ենք պայմանագիր կնքում Երկիր մոլորակի հե՞տ՝ թե՞ մարդիկ միմյանց հետ՝ իրենց վարքագծի և հետագա ապրելակերպի վերաբերյալ Եվ Երկրի հետ՝ և միմյանց հետ և Մենք՝ Երկրի մարդիկ՝ փորձում ենք երրորդ հազարամյակի սկիզբը նշանավորել մեր կեցության նոր փուլով՝ այս չքնաղ՝ սակայն այդքան փխրուն Մոլորակի վրա մեր տեղի և դերի նոր գիտակցմամբ

Հնում՝ այն ժամանակ՝ որը մենք անվանում ենք «մարդկության մանկություն»՝ մարդիք հավատում էին «հողի ոգու» «կրակի ոգու» «ջրի ոգու» «ծառի ոգու» « կենդանական թագավորության ոգու» հզորությանը Հիշում ես՝ որքան գեղեցիկ է այս ամենը նկարագրված «Կապույտ թռչուն» հեքիաթում և Նախքան ծառ կտրելը մարդը բացատրում էր «անտառի ոգուն» թե ինչի համար է դա իրեն անհրաժեշտ՝ թույլտվություն էր խնդրում ոգուց՝ խոստանում հետագայում վերականգնել անտառի կորուստը

Ավելի ուշ մենք ներողամտորեն ժպտում էինք մեր «մանկական» հավատամքների վրա՝ Տասնյակ հազար տարիների ընթացքում մենք աճեցինք՝ ամրացանք, դարձանք Երկրի տերերը Եվ արդեն հավատում էինք միայն մեր անսահման հզորությանը և Բնության հանդեպ ունեցած մեր անսահման իշխանությանը

Եվ միայն այսօր սկսեցինք հասկանալ՝ թե որքան էինք սխալվում

Ինչպես պարզվեց՝ մենք վատ՝ շատ վատ տերեր ենք Զէ որ իմաստությունը նրանում չէ՝ որ սպանես ու ոչնչացնես ամենը քո շուրջ և Ամենին էլ՝ դրա համար շատ խելք պետք չէ՝ բավական է միայն բիրտ՝ կույր ուժ՝ որից մենք շատ ունենք և Այժմ մենք նմանվում ենք փղի՝ որը բյուրեղապակու խանութ է մտել





Իմաստությունը կայանում է նրանում՝ « որ պետք է գիտակցել՝ ուժը տալիս է ոչ միայն իրավունքներ՝ այլ նաև մեծ պարտականություններ՝ նախ և առաջ պատասխանատվություն

կենդանիների և բույսերի՝ մեր «փոքր եղբայրների» այնօր--այնօր, մի՞ զարմացիր մեր եղբայրների առջև

Հիշում ես «Փոքրիկ արքայազն» հեքիաթում© «Արթնացա առավոտյան» լվացվեցիր» կարգի բերեցիր քեզ, ապա անմիջապես կարգի՞ բեր քո մոլորակը»


Բնաստությունը նրանում է՝ որ մեր այս հզորությամբ կարողանանք գտնել մեր ճշմարիտ» համեստ տեղը այս փխրուն» փոխկապակցված աշխարհում


Երկրի հրովարտակը կոչ է անում բոլոր մարդկանց©


-  Հարգել Երկիրը և կյանքը իր ողջ բազմազանությամբ
-  Հոգ տանել կենդանի համակեցության մասին (խորհիր «կենդանի համակեցություն»՝ հիանալի և միասնական բառի շուրջ)» հասկացողությամբ» կարեկցանքով և սիրով
-  Գառուցել արդար» սոցիալապես ինտեգրացված» կայուն և խաղաղ ժողովրդավարական հասարակություն
-  Պահպանել Երկրի առատաձեռնությունը և գեղեցկությունը ներկա և ապագա սերունդների համար

Հրովարտակը մանրամասն բացահայտում է այդ սկզբունքներից յուրաքանչյուրը՝ ցույց տալով նրանց իրականացման ճանապարհները Բհարկե՞ք Քեզ դեռ դժվար է յուրացնել Հրովարտակի դրույթները խորությամբ» բայց տարիների ընթացքում քո առաջ կբացվեն Հրովարտակի հոգևոր հարստությունները» նրա վառ» համապարփակ էությունը

3 Իսկ այժմ համոզված եղիր.

 երբ Դու կանգնեցնում ես ձեռքը» որն անտեղի կտրում է ծառը» աննպատակ պոկում է դաշտային ծաղիկը» կարկաչուն առվակը դարձնում է գարշահոտ ջրափուս» իսկ գեղատեսիլ կիրճը՝ աղբանոց»

 երբ Դու անտառ կամ դաշտ ես դուրս գալիս ոչ թե ամենայն շնչավորը ոչնչացնելու նպատակով» այլ զմայլվելու կյանքի հրաշքով» մեզ շրջապատող աշխարհի գեղեցկությամբ և ներդաշնակությամբ»

 երբ Դու ամայի տարածքը վերածում ես ծաղկող պարտեզի» մաքրում - բացում ես ապականված աղբյուրը» գետափը կամ լճափը»

ապա

ԴՈՒ ՃՇՄԱՐՏԱՊԵՍ ՀԶՈՐ ՄԱՐԴ ԵՍՔ

ՈՎ ԳՈՐԾՈՒՄ Է ՀՐՈՎԱՐՏԱԿԻ ՕՐԵՆՔՆԵՐԻՆ ՀԱՄԱԶԱՅՆ

Ե՞Վ ԶԱՎԱԿԸ՞ Ե՞Վ ՏԵՐԸ ՄԵՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱՆ՝ ԶՔՆԱՂ ԵՐԿԻՐ ՍՈՒՈՐԱԿԻՔ

Կարինե Դանիելյան և “Հանուն ԿՍԶ” ասոցիացիայի երիտասարդական թև:

Ն Ն Ն

Երկրի հրովարտակը դպրոցում

Մարդը բնության զավակն է, ապրում է նրա մեջ և նրա միջոցով: Գիտատեխնիկական հեղափոխությանը զուգընթաց մեծանում է բնության վրա մարդու ներգործությունը: Ակադեմիկոս Վերնադսկին գրել է, որ մարդը, ամբողջությամբ վերցրած, դարձել է հզոր երկրաբանական գործոն, որը ժամանակի ընթացքում կենսոլորտի վրա ազդելով ձևավորել է նոր ոլորտ՝ նոոսֆերա: Մարդու ներգործությունը բնության վրա այն աստիճան է մեծացել, որ խախտվել է բնական համակարգերի մեջ գործող, էվոլյուցիայի պրոցեսում հաստատված դիմանիկ հավասարակշռությունը: Բնության պահպանության խնդրի նկատմամբ մշտապես աճող պահանջների ժամանակակից պայմաններում, դպրոցականների, ամբողջ աճող սերնդի էկոլոգիական դաստիարակության գործը առաջնահերթ կարևորություն է ստանում: Աճող սերնդի էկոլոգիական և բնապահպանական կրթության և դաստիարակության հիմքի վրա ձևավորվող էկոլոգիական կուլտուրայի բովանդակությունը պետք է կազմեն հարգանքը կենդանի բնության օրենքների նկատմամբ, դրանց հաշվառումով համապատասխան վարքագծի դրսևորման ու տնտեսական գործունեության կազմակերպումը: Այլ կերպ ասած, էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունը հասարակության ապագա անդամների համար պետք է ձեռք բերեն աշխարհայացքային նշանակություն:

Այս խնդիրների լուծման դժվարին և պատասխանատու ճանապարհին մեզ՝ ուսուցիչներին, օգնության հասավ «Հանուն կայուն մարդկային զարգացման» ասոցիացիայի Երկրի Հրովարտակի վերաբերյալ նախագիծը: Այն մեզ հնարավորություն ընձեռեց նոր մոտեցումներ ունենալ հիմնախնդրի լուծման համար: Այն հաստատեց, որ մարդու ամբողջական մտածողության և հիմնախնդիրների համատեղ համակողմանի լուծման անհրաժեշտություն կա: Երկրի Հրովարտակը լույս սփռեց մեր աշխատանքային գործունեության բոլոր ուղղությունների վրա: Առաջին հերթին այն, որ բնության մասին ամբողջական պատկերացում ունենալու համար անհրաժեշտ է դպրոցում պետական ծրագրերով նախատեսված բոլոր առարկաների ինտեգրում: Անհրաժեշտ է նպատակաուղղել, վերանայել ծրագրերը, էկոլոգիականացնել դրանք, որպես հիմնադրույթ ընդունելով Երկրի Հրովարտակի սկզբունքները: Մեր աշխատանքները

կազմակերպում ենք այնպես, որպեսզի Երկիր Հրովարտակի սկզբունքները կյանքի կոչենք: Դպրոցական դաս - կոնֆերանսներ, «Ինչ է Էկոլոգիան» հայրենասիրական արշավներ, «Իմ կենդանին» հրապարակային ցուցահանդեսներ, գրական-գեղարվեստական-երաժշտական միջոցառումներ, օրինակ՝ «Ֆլորա աստվածուհու պարահանդեսը», որը մի կոչ է մարդկությանը բնության հետ ներդաշնակ ապրելու, ապագայի մարդուն բնական համալիրների գեղեցկությունից չզրկելու, մարդու իրավունքի, որպես բնության մի մասնիկի, գիտակցելու մասին: Ցերեկույթի վերջում անելանելի դրությունից դուրս գալու միակ ելքը Ֆլորա աստվածուհուն նամակ գրելն է, ներողություն խնդրելը, իսկ նամակի համար ամբողջությամբ հիմք է հանդիսանում Երկրի Հրովարտակի դրույթները, սկզբունքները, որը, որպես հիմնարար փաստաթուղթ, մեղմում է աստվածների զայրույթը, և նորից ներդաշնակ կյանքը երկրի, մարդկանց և բնական համալիրների միջև շարունակվում է:

Այսինքն կյանքի անընդհատության, երկրի գեղեցկության պահպանումը կախված է Երկրի Հրովարտակի կենսագործունեությունից:

Դուրես Ղափանցյան, ուսուցչուհի

Ն Ն Ն

ԲԱՑ ՆԱՄԱՆ ԻՄ ՀԱՍԱԿԱԿԻՑՆԵՐԻՆ

Նարեի և Արմենի Երկխոսությունը

Նարե - Արմեն, Արմեն ինչ՞ է սա

Արմեն - Նարե տես, սրան ասում են քարտեզ, ամբողջ աշխարհին է վրան, չես՞ զարմանում

Նարե ջան: Նարեն ինչու զարմանա, բայց եղբորն է փորձում նա.

- Սա ցամաք է, իսկ սա ջուր: Լեռներ, ծովեր իրար կից, ջուրը շատ է ցամաքից:

Նարե - Իսկ թե հանկարծ բարձրանա՞

Արմեն - Չէ, իր տեղում թող մնա

Նարե - Որ բարձրանա աղետ կլինի՝ ջրհեղեղներ, փոթորիկ, երկրաշարժեր, հրդեհներ

Արմեն - Մի պահ կանգ առեք աշխարհի մարդիկ: Եվ հիշեք խնդրում ենք՝ երբ մի ծաղիկ եք պոկում Երկրի վրա Աստղերը երկնքում տխրում են

Նարե - Ուրեմն ինչու՞ եք ուզում, որ մենք ծիծաղկոտ, կապտաշյա երկինք ու աստղեր չտեսնենք: Ինչ է՞ դուք այլևս մեզ չեք սիրում

Արմեն - Դուք այնքան եք մեծացել, որ չեք՞ հիշում Փոքրիկ Բշխանի խորհուրդը

Նարե - Արթնացար առավոտյան, լվացվեցիր, կարգի բեր քեզ ապա անմիջապես կարգի բեր քո մոլորակը

Արմեն - Հարգելի մեծահասակներ, դուք ձեր հզորությամբ պիտի կարողանաք գտնել ձեր համեստ տեղը այս տխրուն աշխարհում

Նարե - Եթե չեք կարող, եթե շփոթվել ու մոլորվել եք, թույլ տվեք օգնենք ձեզ, չէ որ դուք մեզ շատ եք սիրում: Չէ որ՝ դուք շատ էիք ուզում, որ մենք ծնվենք

Արմեն - Խնդրում ենք ձեզ, մի գրկեք մեզ մեր միակ տնից, մեր Երկիր մոլորակից: Ձեր խղճի երեսին նայեք ամեն օր քնելուց առաջ

Նարե - Մենք ինչպես՝ ուղղենք ձեր բոլոր սխալները, որ դուք մեզ ժառանգություն եք տողնում

Նարե և Արմեն - Մենք անուն ենք դեռ, իսկ դուք ազգանուն:

Օգտվելով մեզ ընձեռած հնարավորությունից՝ մենք, հայ երեխաների անունից, բաց նամակ ենք հղում աշխարհի բոլոր ծագերում ապրող մեր հասակակիցներին՝ անկախ բնակության տեղից, դավանանքից, մշակույթից:

Հարգելի բարեկամ, ընդամենը մի քանի տասնամյակ առաջ, մարդիկ էկոլոգիական խնդիրներ գրեթե չունեին կամ դրանք նկատելի չէին: Բայց մեր սերունդը արդեն անհանգստացած է, թե աշխարհը ինչ տեսքով է փոխանցվում մեզ և մեր հաջորդ սերունդներին: Արդյոք կկարողանանք մենք ապրել այստեղ, եթե շարունակվի բնության գիշատչական ավերումը, եթե գիտական նվաճումները շարունակեն ծառայել ոչ թե սերունդների բարեկեցությանը, այլ ոչնչացման միջոցների կատարելագործմանը: Երկրագնդի ռեսուրսները անողորմաբար նվազում են. շրջանառությունից դուրս են գալիս բերրի հողերը, մեծանում է երկրի էկոլոգիական ծանրաբեռնվածությունը, աղետալիորեն աղտոտվում են օդն ու ջուրը, անապատները մեծանում են, պակասում են երկրագնդի թթվածին մատակարարող անտառների տարածքը: Ամենուրեք քիմիական աղտոտում է, ամենուրեք աճում են մարդկանց և ամեն մի կենդանի էակի գոյության համար վտանգավոր թափոնների լեռները:

Թանկագին բարեկամ, մենք կանգնած ենք երկնընտրանքի առջև՝ երկրի և միմյանց մասին հոգալու նպատակով ձևավորել գլոբալ համագործակցություն, թե մասնակից լինել ինքնակործանման ու կյանքի բազմազանության վերացմանը:

Մենք բոլորս կապված ենք միմյանց հետ ընդհանուր ճակատագրով: Բնության միջոցով մենք բոլորս կապված ենք նյութերի շրջանառությանը մեկ մոլորակային համակարգով ու մարդկությանը փրկելու համար մենք պետք է գործենք համատեղ որոշակի համակարգված շրջանակներում:

Սիրելի հասակակիցներ, մենք կոչ ենք անում ձեզ համախմբվել «Մտածենք գլոբալ, աշխատենք լոկալ» կարգախոսի շուրջը: Օգնենք մեծերին, փորձենք ազդել նրանց ընդունած որոշումների վրա, լսելի դարձնենք այն պարզ ճշմարտությունը, որ ոսկեդրամը ուտելիք չէ, և մոլորակի որ անկյունում էլ ապրեն իրենց երեխաները սեփական պապերի ու հայրերի ստեղծած կործանարար միջավայրի գոհն են դառնալու, որ մայր հողը ափսե է, ինչ որ դնես նրա մեջ, այն էլ ուտելու էս:

Մենք գիտենք, որ ձեզնից, հարգելի մեծահասակներ, շատ բան ունենք սովորելու ճշմարտության և իմաստնության համատեղ որոշումների ճանապարհին, սակայն դուք էլ պարտավոր եք լսել մեզ, հաշվի առնել մեր կարծիքը և խորհուրդը:

Վերջաբանի փոխարեն, հարգելի բարեկամ, մենք կոչ ենք անում ձեզ, բոլոր ազգերի պատանիներ և աղջիկներ, որ հանդես գաք պահանջելով վերահաստատել պատասխանատվությունը ՄԱԿ-ի հանդեպ՝ կայուն համաշխարհային համակեցություն

կառուցելու նպատակով: Որ կատարվեն միջազգային համաձայնագրերի սահմաններում գոյություն ունեցող պարտավորությունները և իրագործվեն Երկիր Հրովարտակի սկզբունքները, շրջակա միջավայրի ու զարգացման վերաբերյալ:

Թող մերը լինի այն ժամանակը, որը կհիշվի որպես կյանքի նկատմամբ հարգանքի վերականգնման և կյանքի ցնծալի հաղթանակի ժամանակաշրջան:

Մենք սպասում ենք Ձեր արձագանքներին, սիրելի հասակակիցներ, Ձեր գործնական առաջարկներին և հրավիրում ենք երկխոսության, քանզի՝

«Մենք չենք ժառանգում երկիրը մեր նախնիներից, մենք այն փոխառնում ենք մեր սերունդներից»:

Մեր հասցեն է - Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան 0088, Մազմանյան 5ա, դպրոց Ն 195.

հեռ. – (+374 10) 34-24-00 էլ-փոստ - ruzanna2001@mail.ru

Ն Ն Ն

Գետի հեքիաթը

Գարնանային տաք կեսօր էր: Անտառահատի տնակից ոչ շատ հեռու քսքչալով հոսում էր գետը: Ծաղիկները ցողի կաթիլներով լվացվելուց ու թարմանալուց հետո աշխույժ գրույցի էին բռնվել գետի հետ:

Գեղեցկատեսիլ նացիսը գլուխը ջրից չբարձրացնելով պատմում էր օրինակ, որ ինքը գետերի արքա Կեփեոսի և հավերժահարս Լավրենտիոսի որդին է և Գորգոն մեղուգայի կախարդանքի հետևանքով է ինքը դարձել ծաղիկ: Քաջվարդը իր շուրջն էր հավաքել խատուտիկին, երիցուկին, երեքնուկին ու պարծենկոտ գլուխը շարժելով պատմում էր, որ ինքը Էսկուլապի ծաղիկն է և արդեն ժամանակն է, որ թագուհի վարդը իրեն զիջի գահը, չէ՞ որ ինքը հրաշագործ է: Ասպետ մեխակը բարձրահասակ, հպարտ կանգնած, կարծես իր սլացիկ հասակն էր ցուցադրում բոլորին: Եռագույն մանուշակը թփերի միջից հետաքրքրասեր աչուկները բացած մեկ աջ էր նայում մեկ ձախ, որպեսզի ոչ մեկի ասածը բաց չթողնի հանկարծ: Նրբագեղ, անձեռակերտ խոլորձը հիացած իր գեղեցկությամբ պատմում էր բոլորին, որ ինքը գեղեցկության և սիրո հովոնավորն է ու բոլոր աստվածների սիրելին: Անուշաբույր հակինթը տխուր պատմում էր գետին, որ ինքը Ապոլոնի և Հերմեսի ծաղիկն է և անընդհատ փոխում էր իր գեղանի հանդերձանքը, մեխակի ուշադրությանը արժանանալու համար: Իսկ թագուհի վարդը շենշող գեղեցկությամբ հիացմունք էր սփռում շուրջը ու պերճախոս գրույցի էր բռնվել սոխակի ու դեղձանիկների հետ:

Անտառի բոլոր բնակիչները երախտապարտ էին գետին իրենց պարգևած կյանքի և անհոգ օրերի համար: Գետը ուրախ էր և հպարտ ու ոչինչ չէր խնայում: Ուշի ուշով հետևում էր որ կյանքը ավելի բարեկեցիկ, երջանիկ լինի: «Ես շիթ առ շիթ ջուր եմ ցողում շուրջս, ես ծիծաղ ու բարիք եմ ստեղծում», այդպես էր մտածում գետը: Անտառի կենդանիները հերթով մոտենում էին գետին, լվացվում, հագեցնում իրենց ծարավը և երախտագիտություն հայտնելով հեռանում էին իրենց գործին: Փոքրիկ խխունջը օրինակ գետի ափին տերևի վրա նստած օրորվում էր և իր գեղեցիկ ամրոցից գլուխը հանած գրուցում էր գետի հետ: Շատախոս գորտերը իրենց անվերջանալի պատմությունն էին պատմում գետին: Աշխատասեր մրջյունները իրար

հանդիպելիս քիթ քթի ինչ-որ բան էին խոսում ու շարունակում իրենց ճանապարհը: Բժիշկ փայտփորը օրնիբուն բուժում էր ծառ ու ծառաբուն և նրանից գոհ էր ողջ անտառը: Մայր նապաստակը ծաղիկներով զարդարված խոտերից վերմակ էր կարել, փաթաթել էր իր ձագուկին և օրոր էր ասում: Գետը ստեպ-ստեպ մոր ձեռքի պես նուրբ ու թովիչ գով հովիկ էր ուղարկում բարձր, լուսասեր ծառերին, որ նրանք էլ հանգիստ շնչեն:

Զմայլվելով անտառի գեղեցկությամբ գետին է մոտենում մի աղջիկ: Նստում է մի կոճղի վրա գետի ափին, մի փայտ վերցնում ձեռքը և սկսում խաղալ գետի հետ:

- Դու որտեղից ես գալիս գետակ և ուր ես գնում,- հարցնում է աղջիկը

- Ես գալիս եմ հեռու լեռներից, իմ ակունքները լեռնային արագահոս աղբյուրներն են: Ես կյանք եմ տալիս բնությանը, ծառ ու ծաղկունքին, ապա երկար ճանապարհ անցնելով հասնում եմ ծովին ու խառնվում նրա ջրերին:

- Պահ, չէ մի չէ կյանք ես տալիս բնությանը, ծառերին,- ընդհատեց աղջիկը,- նրանք առանց քեզ էլ կարող են շատ բարեկեցիկ կյանքով ապրել: Ինչու՞ ես քեզ երևակայում այ գետ:

- Հիմար, անմիտ աղջիկ, - վրդովեց գետը, իսկ դու գիտես ի՞նչ կլինի, եթե ես հանկարծ հեռանամ անտառից:

- Չէ, ես ոչինչ էլ չեմ ուզում իմանալ և համոզված եմ, որ ոչինչ էլ չի լինի: Հեռացիր, գնա այստեղից,-կամակոր պատասխանեց աղջիկը:

Գետը նեղացավ, խուլ հառաչեց և որովհետև միայն աղջիկը չէր որ այդպես էր մտածում, այլ գետի ափ եկող բոլոր մարդիկ, իրենց չար արարքներով վիրավորում էին գետին, նա որոշեց դաս տալ բոլոր նրանց, ովքեր գետի մեջ էին լցնում ամեն տեսակի աղբ, հնոտիներ, անպետք իրեր: Գետը կամաց-կամաց փոխեց իր հունը: Անտառի բոլոր բնակիչները իրար խառնվեցին: Հզոր լորին ու բարձրահասակ բարդին, գեղանի ուռենին և նագենի խնձորենին, անուշաբույր մասրենին և սգնին, մամուռները և կեչասունկը կամաց-կամաց իրենց գեղանի կանաչ հանդերձները հանեցին ու դեղնած ճյուղերը և դալուկ տերևները անցունքի կաթիլների նման թափվեցին հողին:

Վշտացած կենդանիները թողնում էին իրենց բները և արագ-արագ հեռանում: Անտառում էր չէր լսվում ծառերի մեղմ սոսափը, թռչունների անվերջ զրույցը, սոխակների դայլայլը: Թիթեռնիկների գեղեցիկ պարը էլ չկար:

Հուժկու քամին սուրում, ավլում էր անտառը, արմատախիլ անելով հինավուրց ծառերը: Հողի չորացած շրթունքները կարծես աղաչում էին, - մի կում ջուր տվեք: Կամաց-կամաց անտառը դարձավ անապատ:

Տաք ավազ է ծայրից ծայր,

Ոչ ծաղիկ կա, ոչ էլ ծառ,

Անվերջ տոթ է վառ արև,

Ոչ գով քամի, ոչ անձրև...

Աղջիկը հայտնվեց շիկացած ավազի վրա: Հանկարծ ծարավեց,- ջուր, ջուր եմ ուզում, աղիոդորմ լալիս էր նա: Չգիտես որտեղից անձայն սողալով նրան մոտեցավ Մայր կոբրան:

- Ինչու՞ ես լալիս աղջիկ և դու ինպես՞ ես հայտնվել այստեղ,- հետաքրքրվեց օձը:

Աղջիկը օձին պատմեց իր զրույցը գետի հետ, պատմեց թե ինչպես է նեղացրել գետին և թե ինչպես է գոջում իր չար և անմիտ արարքի համար:

